

8569

8570

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ

ԳԵՏՆԱԽՆԶՈՐՈՅ

8571

8572

8573

8574

8575



Կ. ԳՈՒԼԻՅ

ՏԳՍԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԽՄԵԱՆ

1880

635.2

5-84

1094  
p 87



2002

2011

114.

V

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ԿԵՆԴՆԱՐՈՒԺՈՒԹԵԱՆ,  
ԱՆՏԱՌԱՑ ՈՒ ՀԱՆՔԱՑ  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

ԵՒ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱՑ  
ԳԼԽԱԻՈՐ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ

Գ Ր Ե Ց

ՏՈՒԲՔ. Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆ  
ՕՍՄ. ԵՐԵՍՓՈՒՆԱՆ ՍԵՔԱՍՏԻՈՑ

Արճառապուլամ «Բիւզաճղիոն»ի թիւերէն

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ԲԻԻԶԱՆԴԻՈՆ»Ի

1911

17120

631.17

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ,  
 ԿԵՆԴՐԱՆԱԲՈՒԺՈՒԹԵԱՆ  
 ԱՆՏԱՌԱՑ ՈՒ ՀԱՆՔԱՑ  
 ՎԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ



Ա. ՀԱԼՔԱԼԵԻ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Հալքալըն երկր․ բարձրագոյն վարժարան մ'է, 22 տարիէ ի վեր հաստատեալ, Այս Սթէֆանօէն 10 քիլոմէտր հեռի՝ բարձունքի մը վրայ գտնուող համանուն գիւղին կից ագարակի մը մէջ, որ ունի 9000 տէօնիւմ տարածութիւն, 3000ը մշակելի, 100ը անտառ, 40ը այգի, պարտէզ, ևն.։ Հողն ընդհանրապէս կրաքարային է, և բերրիութեան տեսակէտով միջակ:

Այս վարժարանը Ֆրանսայի՝ Կրիյնոնի և Մօնրէլիէի երկրագործական վարժարաններուն ծրագիրն ունի գրէթէ:

Հալքալըն սկիզբները բաւական լուրջ վարժարան մ'էր, սահմանափակ թուով ուսուցիչներ մեծ խնամք կ'տանէին աշակերտաց տեսական ու գործնական հմտու-

77 35.57

թեան ժասին . ունէին գործնական աշխատութիւններ և փորձառական դաշտեր , ուրբը հետեանք ունեցաւ բաւական լուրջ աշակերաններ , սակայն սպա վարժարանի պիւտօէն երթալով ստուարացաւ , ուսուցչաց թիւն աւելցաւ , հոգածութիւնը նուազեցաւ , գործնական աշխատութիւնք պակսեցան , փորձառական դաշտերը լքուեցան , որով և դժբաղդարար օր քան զօր նուազարդիւնք կուտայ : Ու այդ վարժարանին համար տարեկան 12,000 ոսկի կ'ծախսուի :

Կրիցնոսի և Մօնթէլիէի ֆրանսական նմանօրինակ վարժարանները , ինչպէս և մեր դրացի Պուլկարիոյ Սատովայի վարժարանին մէջ՝ մինչդեռ 6—10 ուսուցիչ կայ ընդամենը և մի քանի ալ օգնական , Հալքալըի վարժարանին մէջ , առանց հաշուելու վարչական 12 պաշտօնեաները , կան աւելի քան 25—30 ուսուցիչ և օգնական : Երկրագործական նախարարութեան մէջ պաշտօն և կամ անոր յարակից հաստատութիւններու մէջ գործ ունեցողներէ շատեր այսակող դաս մը ճարսած են , ուր կ'երթան շաբաթը 1—2 անգամ , ու այսպէսով թէ՛ այդ էֆէնտիները պարբօրակ կ'ունենան շաբաթը 1—2 օր բացակայելու , թէ՛ աւելորդ ամսական մը կ'առնեն , և թէ՛ օդ առած կ'ըլլան Հալքալըի բարձունքներուն վրայ : Այս էֆէնտիները փոխանակ սուս-

ւօսները տալու իրենց տեսական դասերը , ինչ որ տեղի կ'ունենայ ընդհանրապէս այս կարգի վարժարանաց մէջ , ամէն իրեն յարմար ժամը կ'ընարէ , առաւօտ , ցերեկ երեկոյ , որով և խեղճ աշակերտները ժամանակ չեն գտներ խմբովն գործնական աշխատութիւններ կատարելու :

Երկրագործ . նախարարութեան պաշտօնեաներէն շատեր տարին մէկ քանի անգամ դաւանները կ'ըրկուին քննութեանց համար , և կամ Եւրոպա ո'ւ է պաշտօնով , ու այդ ժամանակամիջոցին շատ անգամ դասերը չեն սրուիր , սակայն ամսականները կ'առնուին ի վեաս վարժարանի ու աշակերտաց : Անցեալ տարի դարունին Երկրագ . նախարարութեան պաշտօնեաներէն Հալքալըի մէջ պաշտօն վարող գլխաւոր ուսուցիչները՝ Պրուսա , Չմիւռնիա և Սելանիկ զրկուեցան , որով և շաբաթներով ու ամիսներով աշակերտներն անոնց դասերէն զրկուեցան , և չեմ գիտեր ինչպէս ծրագիր մը կարելի կ'ըլլայ իրագործել այս պայմաններուն տակ :

Աւելցուր ասոնց վրայ գործնական աշխատութեանց երեսի վրայ թողուլը , վարժարանի հաւաքածոներու և մատենադարանի խեղճութիւնը , ազարակի կենդանեաց շատերուն խնայողութեան տեսակէտով ձեռքէ հանուիլը , են . , որք մեծա-

պէս կ'ըժուարացնեն աշակերաններու ուսումն և թերի կ'ընդուն զայն :

Այս տարի ամառն այս ամէնը բացատրեցի Մալրօգորտաթօ պէյին , ու նոյն իսկ իր խնդրանաց վրայ՝ ուսմանց ծրագիր մը պատրաստեցի , ըստ որում վարժարանը պիտի ունենար միայն ութն ուսուցիչ (\*), Ֆրանսայի նոյնօրինակ վարժարաններու նման , և նոյնչափ կամ նուազ թուով օգնական : Այս ուսուցչական մար-

(\*) .— Իւրաքանչիւր ուսուցիչ պիտի ստանձնէր հետեւեալ գիտութիւններն իրենց ճիւղերով .

1. Երկրագործութիւն
2. Կենդանաբուծութիւն
3. Կենդանաբանութիւն և Բուսաբանութիւն
4. Քիմիա և երկրագործարհետախօսութիւն
5. Ֆիզիզ և Երկրաբանութիւն
6. Երկր . ճարտարագիտութիւն
7. Տնտեսագիտութիւն և Երկ . Օրէնագիտութիւն
8. Առողջապահութիւն և Մանրէաբանութիւն

Իսկ օգնականներն այս գիտութեանց ինչ ինչ երկրորդական մասերը պիտի դասախօսէին :

մինն այս գործով պիտի զբաղէր միայն , ինչպէս տեղի կ'ունենայ եւրոպական նմանօրինակ հաստատութեանց մէջ , և արդէն հազիւ այդչափ կարող ուսուցիչ կըրնանք ունենալ : Ուսման տեւողութիւնը պիտի ըլլար երեք տարի , և աշակերանները պարտէին ընդունիլ առաւօտներն երեք ժամ դաս , և յետ միջօրէի գործնական աշխատութեամբ պիտի պարապէին և պիտի պատրաստուէին աւելի հմուտ և կարող աշակերաներ :

Նախարարն համոզուեցաւ ու խոստացաւ իրագործել առաջարկած ծրագիրս , ապա ինձ հաղորդեց թէ նախարարութեան երկրագործական ճիւղին գլխաւոր պաշտօնեաներն սկզբունքով կ'ընդունին բոլոր առարկութիւններս , սակայն գործադրութեան մէջ զժուարութիւն կ'աեանեն , ուսուցչաց թուոյն նուազելուն համար , զի հոն տասնեակ տարիներէ ի վեր պաշտօնավարող ուսուցիչներն ինչպէս ճամբել , այսինքն թէ ինչպէս իրենց շաբաթական մէկ երկու այցելութեամբ առած ամսականէն զրկուիլ : Երկրորդ առարկութիւննին է թէ ուսուցչաց մեծ մասը չէ կարող ս և է գիտութեան բոլոր ճիւղերը դասախօսել . . . : Մենք երկրագործական վարժարանի շրջանն աւարտողներէն չէինք յուսար ընդունիլ այսպիսի պատասխան մը . մենք

մեր ծրագրին մէջ ջանացած էինք իւրաքանչիւր ուսուցչի մէկ գիտութիւն յատկացնել իր բոլոր ճիւղերով, որպէս զի այնոր մասին մասնագէտ դասնայ, մինչդեռ հիմա դասերուն մէջ ամէնէն տարօրինակ բաշխումն եղած է. զոր օրինակ, ուսուցիչներէն մին կ'դասախօսէ Ընդհ. Տնտեսագիտութիւն, Երկրագործական Տնտեսագիտութիւն, Կենդանաբանութիւն, Միջատաբանութիւն, Կաթնաբանութիւն և Երկրագործական մեքենաներ: Ուրիշ մը կը դասախօսէ Բուսաբանութիւն, Մէտէորաբանութիւն և Անտառաբանութիւն:

Դասերու թիւը շատցնելու և գործ ստեղծելու համար մասնաւոր ճիւղեր ստեղծուած են. զոր օրինակ Մեղուաբուծութիւն, Հաւաբուծութիւն՝ որ Եւրոպայի և ոչ մէկ վարժարանին մէջ ուրոյն ճիւղ մը կ'ներկայացնեն, այլ Կենդանաբանութեան կամ Կենդանաբուծութեան ուսուցիչն այնոց մասին մէկ երկու դաս կ'ընէ. Կաթնաբանութիւնը՝ Երկրագործական Արհեստախօսութեան մէկ ճիւղն է, Երկրագործական մեքենաներու մասին Ընդհանուր երկրագործութեան և կամ Երկր. ճարտարագիտութեան դասին մէջ կ'խօսուի:

Նախարար պէյն ինձ ըսաւ թէ վերջապէս սրոյած են այդ ծրագիրս կամաց կամաց գործադրելու աշխատիլ, և արդէն

անասկան դասերու առաւօսներն աւանդուիլն ընդունուած է:

Նախարար պէյն եթէ իրր սկզբունք ընդունիլ ասը թէ ս և է անձ չէ կարող նախարարութեան մէջ պաշտօնեայ և Հալքալըի մէջ ուսուցիչ ըլլալ, ամէն դժուարութեանց առաջքը կ'անուէր. թէ իր պաշտօնեաները նախարարութենէն բացակայելու պատրուակ չունենալով իրենց գործերուն կ'նային, և թէ ուսուցիչք ամբողջովին ինքզինքնին վարժարանին նուիրած կ'ըլլան, և հմուտ ու կարող աշակերաններ կ'պատրաստուին:

Վարժարանին ուսուցչաց թիւը սահմանափակելով և զանոնք լիուլի կերպով վճարելով՝ տարեկան 5000 ոսկիով կարելի պիտի ըլլայ զանոնք գոհացնել: Տարեկան 1000 ոսկի զգրոցական պիտոյքի, մասնաշաղարանի, հաւաքածոներու (\*) ու աշխատանոցներու յատկացնելով, և նոյնչափ մ'ալ աշակերտաց զգեստից և այլ պիտոյից համար հաշուելով, 7000 ոսկիով պիտուէն կ'գոցուի: Աշակերտաց սննդեան ծախար նկատի չառի, որովհետեւ 9000 արտափար հող ունեցող ագարակ մը՝ ուր 100է աւելի

(\*).—Տարիներէ ի վեր վարժարանի, մասնաշաղարանի եւ հաւաքածոներու մասին բան մը ծախսուած չէ:

աշակերտաներ օրական երեք—չորս ժամ կ'աշխատին ձրիաբար, եթէ լաւ մատակարարուի, անշուշտ կրնայ հոգալ դո՛ւն այդ աշակերտաց անունդին ծախքը: Այսպէս 7000 սակիով փակուած կ'ըլլայ պիւտօէ մը՝ որուն համար 12,000 սակի կ'ծախսուի այժմ:

Պուլիարիոյ Սատովայի վարժարանն ունի 100,000 ֆր.ի պիւտօէ մը, որուն 90,000 ֆրանքը դպրոցին ազարակը կ'արտադրէ, որով վարժարանը կառավարութեան միայն 10,000 ֆր.ի կուգայ:

Հալքալըի ազարակին մէջ ժամանակատեղական կենդանիներէն զատ, կային սպանիական Մէրինոզի, անգլիական Տիշլէյ ցեղերէն ոչխարներ, սուրիական կովեր. ևն., սակայն անոնց պէտք եղած խնամքը չարուելուն, տկարացան, որով ստիպուեցան ծախել: Վերջին տարիներս ալ ծախեցին կաթնատու կովերն ու ոչխարաց հօտերը, «չահաբեր չեն» ըսելով: Արդ, եթէ այդ կենդանիներն երկրագործական վարժարանի յարակից տիպար ազարակի մէջ էֆօր չընեն, ուրեմն ոչ մէկ տեղ ընելու են. ուստի բոլոր երկրէն վտարելու է այդ կենդանիները...: Այժմ զուիցերիական Շուիցի կովեր բերուեցան, որոց նոյն արդիւնքը տալն անկասկած է:

Հալքալըի վարժարանին ազարակը տի-

պար ազարակ մ'ըլլալէ շատ հետի է. աղբի կոյտերն անխնամ թողուած են, անկէ հօսող ջուրերէ կազմուած լճակի մը մէջ իբր կղզեակ, և հակառակ աղբաջրի հօր (fosse à purin) ունենալու: Հակառակ եղած դիտողութեանց, շերամը տակաւին ախոռանման յարկի մը մէջ կ'ընուի: Երկրագործական մեքենաները պէտք եղածին պէս կայան մը չունին, և խառնիխուռն աստ անդ ձգուած են: Կամնիչ մեքենան Նոյի օրէրէն մնացած է:

Հալքալըն Այ—Սթէֆանտսէն 10 քիլօմէդը հետի գանուելուն, ուսուցչաց և պաշտօնէից երթեւեկին համար ամէն տարի հարիւրաւոր սակի կ'ծախսուի վարժարանին կողմէ և մէկ քանի կառք ու ձի կ'պահուի, որք ընականաբար պիւտօէն կ'ծանրաբեռնեն: Հարկ է միանգամընդմիջտ լաւ մը շինուի այս ուղին Նաֆիայի կողմէ, զի վարժարանէն զատ կ'մատակարարէ չուրջ բոլորի գիւղերը: Գուցէ մէկ ճեփեփով կարելի կ'ըլլայ բոլոր երթեւեկի գործը կատարել, որով վարժարանը տարեկան խոչոր ծախքէ մը ազատած կ'ըլլայ:





Բ. ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՆ. ՎԱՐԺԱՐԱՆՔ

Ունինք երկու երկրագործական Գործ-  
նական վարժարաններ, մին ի Սելանիկ  
1305ին հաստատեալ, և միւսն ի Պրուսա  
1307ին հիմնուած. ասոնք սարեկան 3000  
ոսկի ծախսով և 5 ուսուցիչներով զպրոց-  
ներ էին, Պրանտայի նմանօրինակ վարժա-  
րանաց ծրագրով և բաւական օգտակար  
ալ եղած են: Սահմանադրութեան առա-  
ջին տարին ասոնց պիւտօէն 4000 ոսկեոյ  
բարձրացաւ: Այս վարժարաններն ի Պրան-  
սա ընդհանրապէս երկու տարի աւելագու-  
թիւն ունին, և բաւական ալ է, իսկ ի  
մեզ երեք տարի է: Նախապատիւ է աւելի  
պահանջկոտ ըլլալ այս վարժարանաց դի-  
մող ուսանողներու հմտութեան մասին և  
երկու տարուան շրջան մ'ընդունիլ:

Այս վարժարանաց մէջ ալ հակառակ  
իրենց «Գործնական» յորջորջման գործնական  
աշխատութիւնք անբաւական եղած են  
ու երթալով նուազած:

Մեր երկրին համար այս գործն. վար-  
ժարաններն աւելի օգտակար են, ասոնք  
են որ հմուտ երկրագործներ կ'հասցնեն  
երկրին, և ոչ թէ բարձրագոյն վարժարան-  
ներն՝ որք միայն էֆէնտիներ և պաշտօն-  
եաներ կուտան, որոնցմէ մեծ օգուտ մը չի  
քաղեր երկրագործ գասակարքը: Պրանտա  
որոյ կ'հետեւինք ընդհանրապէս, ունի Հալ-

քալրի նման երեք վարժարաններ, բայց  
անոր դէմ ունի և 80 հատ (\*) գործնական  
վարժարաններ, որոնցմէ ելլողներն իրապէս  
կ'ծառայեն երկրագործութեան. մինչդեռ  
բարձր. վարժարաններէ ելլողները կ'ըլլան  
պաշտօնեայ, ուսուցիչ և կամ մեծ ազա-  
բակաց վարիչներ:

Մեզ համար մէկ Բարձր. վարժարան  
բաւ և շատ իսկ է, և արդէն անոր համար  
հազիւ ունինք պէտք եղած ուսուցիչները,  
սակայն զժբաղդարար մեծամտլական հի-  
ւանդութենէ բռնուած՝ Սելանիկի ուսուց-  
չական մարմինն ուզեց զայն ևս բարձրա-  
գոյն վարժարանի վերածել, հակառակ հմ'  
կրկնակի բողոքներուն: Եւ սուին անոր  
վիճակ մը, որ բարձրագոյնի և գործնական  
վարժարանի միջանկեալ կրնայ համար-  
ուիլ, և փոխան Պրուսայի նման 4,000  
ոսկեոյ շատ աւելի մեծ պիւտօէ մ'ունի,  
և եօթն ուսուցիչ. ասիկա ցաւալի է, զի  
սա ո'չ Բարձրագոյն վարժարանի գերը կը  
կատարէ և ոչ ալ գործնական վարժարանի,  
և անկէ ելնող աշակերտներն աւելի նուազ  
օգտակար պիտի ըլլան քան բուն գործ.  
երկրգործ. վարժարաններէ ելլողները:

Այս տարի Սելանիկի վարժարանն այ-

(\*).— Բուն գործն. վարժարանաց թիւը  
42 է, սակայն կան նաև 12 ազարակ վար-  
ժարանք և 26 հատ երկ. մասնաձիւղերու  
գործն. վարժարանք:

ցելելէ եաք՝ նախարար պէյլին հաղորդեցի իմ այս մասին կարծիքը: Ընդունեց բոլոր գիտողութիւններս և բաւ թէ՛ արդէն ինքն ալ համոզուած է որ, գործնական վարժարաններն աւելի օգտակար են, և անկարելի է Սելանիկի վարժարանը բարձրագոյնի վերածել, թէ՛ զայն բաւ առաջնոյն գործնական վարժարանի պիտի վերածէ. սակայն չեմ գիտեր ի՞նչ անցաւ անկէ եաք, ու նախարարն իր մտադրութիւնն ի գործ չդրաւ:

Նախարարութիւնն որոշած է Ատանայի, Իզմիրի, Էնկիւրիի մէջ և այլուր գործնական երկ. վարժարաններ բանալ և առ այդ հարկ եղած պիւտժէներն ալ քուէարկած է Երեսօթիսանութիւնը, սակայն չեմ գիտեր թէ՛ ասոնց համար ո՞ւր կից ուսուցիչ պիտի գտնենք, մեր ունեցածներն հազիւ կ'բաւեն Պրուսայի և Սելանիկի վարժարանաց, և թէ՛ նոր շրջանաւարտները շատ գոհացուցիչ չեն այս տեսակէտով:

— Նախարարութիւնն որոշած է բանալ Աֆարակ վարժարաններ, այսինքն ագարակներ, ուր երկրագործ պատանիներ կ'աշխատին առաւօտէն երեկոյ, և գիշերները մէկ դաս կ'առնեն: Մէկ տարուան ընթացքը բաւ է ասոնց համար. այդ ժամանակամիջոցին մէջ կարելի է պատրաստել լաւ ու ճարպիկ գործաւորներ, գիտակ

երկրագործական գործիքներուն գործածութեան, նոր մէթոսներու կիրառման, և քիչ շատ տեսական հմտութիւն մ'ալ կ'առնեն:

Երեսօթիսանական ժողովը սիրով ընդունեց ագարակ վարժարաններու մասին եղած առաջարկը. լաւ. սակայն միևնոյն հարցումն է որ պիտի կրկնեմ. ո՞ւր կից պիտի ձարենք ասոնց ուսուցիչ աշխատաւոր վարպետները: Մեր գործնական վարժարանէ կլլողներն՝ այս դերն արդիւնաւոր կերպով ստանձնելու վիճակին մէջ չեն գտնուիր դժբաղդաբար:

— Տեպար աֆարակներն որք իբրև մեր երկրագործ ժողովրդեան համար գործնական դպրոցներ պիտի ըլլային և անոնցմէ օրինակ պիտի առնէին՝ երբեք օգտակարութիւն չունեցան: Այդ հաստատութիւններն շատ տեղեր իբր Խէրազ ագարակի օրինակ հանդիսացած են: Այս տարի անոնցմէ մին՝ Սերաստիաինն՝ այցելեցի, որ աւերակ ագարակի մը ամէն յատկութիւններով օժտուած էր. և ոչ մէկ երկրագործական գործիք կար գործածելի վիճակի մէջ. ամէնը կոտրած, թափած ու մէկ կողմ նետուած. 30—40 փեթակ բերուած են Եւրոպայէն, ամէնէն կատարելագործեալ տեսակէն, որոնց երկուքը կ'գործէին, միւսներն ալ քուած ու նետուած էին...: Առանց չա

փառանցելու՝ կային հոն 1500—2000 սակի արժողութեամբ աւրուած, կտորած գործիքներ: Կաթնատուն մը շինուած էր՝ ուր գեռ մէկ օխա կաթ մտած չէր, և կաթնատան համար բերուած գործիքները կաթի հետ հարուստ ունեցած չէին: Ախտոներն աղտոտ և հակառողջապահական խուցեր էին, կենդանիները կմախքային էին՝ ո և է կերպով օրինակ ըլլալէ շատ հեռի: Ագարակի հողերը կ'մշակուէին ընդհանրապէս երկրի նահապետական գործիքներով ու գրութեամբ: Ագարակի առևոյտանոցն(եօնճալըգ) գաղձով (cuscuste, փափաղ սագալը) վարակեալ էր, որով և գէշ առևոյտանոցի մը տիպար կրնար համարուիլ:

Այս ագարակները շատ անգամ՝ զբօսավայր եղած են երկրագործ պաշտօնէից և այլ իրենց տարեկից՝ էջֆի երիտասարդ զաւակաց: Դեռ չէ մոռցուած Գոնիայի տիպար ագարակի խնդիրը:

Այս ագարակներն ոչ թէ միայն իրենց սնօրէնի ամսականն հանելու ի վիճակի չեն՝ այլ նոյն իսկ տարեկան բաց մը կ'ունենան զոր երկրագործ. նախարարութիւնը փակելու հարկադրուած է, որով և այս հաստատութիւններն ոչ թէ օգտակար չեն այլ և վնասակար...: Հարկ է զանոնք փակել, և կամ աւելի ագարակ վարժարանի վերածել, ինչպէս մտազիր է ընել նախա-

բարութիւնը: Իսկ այս ագարակ վարժարանաց քաջանմուտ երկրագործ ուսուցիչներ ձարելու համար՝ հարկ է ուսանողներ զրկել Պրանսայի երկր. գործ. վարժարանները, որպէս զի հոն ուսանին գործնական աշխատութիւնները, և գան պաշտօնավարել այս հաստատութեանց մէջ՝ յորոց շատ բան կրնայ սպասել երկրագործը:

Եւրոպայի մէջ ընդհանուր երկրագործութեան յատկացեալ վարժարաններէ զատ կան և երկրագործական ինչ ինչ ճիւղերու յատուկ մասնագիտական հաստատութիւններ, զոր օրինակ կաթնարանութեան, այգեմշակութեան, պտղատու ծառերու շերամարտութեան, ևն., որոնց թիւն 26ի կ'համնի ի Պրանսա: Ասոնցմէ ալ ձեռնարկներ եղած է ի մեզ, զոր օրինակ Տրապիզոն, Հալէպ և Կարին կաթնատուներ հաստատուելու վրայ են:

Ի Պրուսա կայ Շերամարտական հաստատութիւն մը, ընդ հակողութեամբ Անուզլակի տրոց վարչութեան, որ աւելի արգիւնաւոր պիտի ըլլար եթէ աշակերտներու աւելի գործնական մարզանք տրուէր անդ: Ասոնցմէ չորս հատ հաստատուելու վրայ է՝ Ամասիա, Կիւմրուշհանէ, Այնթապ և Պէրուլի:

Այգեբանական Գործ. վարժարան մը կար ի Կէօղ-թէփէ, ընդ հակողութեամբ

Անուղղակի արոց վարչութեան, որոյ ծախսոց կ'նպաստէր կառավարութիւնը, սակայն Սահմանադրութիւնն չօշակուելէն ի վեր այդ նպաստը դադրած է: Մեր լսածին նայելով՝ յառաջիկայ Մարտին այս նաստատութիւնը բոլորովին կառավարութեան պիտի անցնի:

Զմիւռնիոյ մէջ ունինք Այգերանական տարրական վարժարան մը և ամերիկեան որթատունկերու անկարան մը: Գրքո՞րքիլիսէի մէջ ալ որթատունկի անկարան մը կայ:

Թիֆլիսի անկարաններ կան Զմիւռնիա, Երզնկա, Ատանա և Պրուսա:

Վարդի անկարան մը կայ ի Սպարթա:

Այս նաստատութիւններու թիւը շատ ցընելու է և այնտեղ խնամեալ գործնական հմտութիւն տալու է:

Գ. ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

Մենք ընդօրինակող ազգ մ'ենք. ինչ որ կ'ընէ Եւրոպացին՝ զայն կ'որդեգրենք, սակայն, դժբաղդաբար, առանց նկատի առնելու շատ անգամ մեր միջավայրի պահանջումները: Այս սխալ գործունէութեան մէկ օրինակը կրնայ համարուիլ մեր այսօրուան երկրագործական պաշտօնէութեան կազմակերպութիւնը: Ֆրանսայի մէջ ուր երկաթուղիները ցանցակերպ ծածկած են բոլոր երկիրը, մի քանի նահանգներու քննիչու-

թիւնն յանձնուած է մէկ անձի, որ ի նարկին 2—3 օրուան մէջ իր անհատութեան յանձնուած բոլոր երկիրը կրնայ աչքէ անցընել, մենք ալ անոնց պէս մի քանի վիլայէթի քննիչութիւնն յանձնած ենք մէկ անձի, որպէս Տրապզոն, Էրզրում, Պիթլիզ, — Իզմիր, Ատանա, Գոնիա, — Սուրիա, Հալէպ, Պէրութ, — ևն.: Ասոնց ամէն մէկը (զոր օրինակ Տրապզոն, Էրզրում, Պիթլիզ) արդէն Ֆրանսայի չափ է, և կ'ուզենք որ մեր քննիչն ամենքը քննէ, առանց նկատի առնելու թէ ո՛չ միայն երկաթուղի չկայ, այլ և հաղորդակցութեանց միջոցները դժուար են, և տարւոյն մէկ մասին մէջ բոլորովին անկարելի է: Եւ նոյն իսկ եթէ լաւ կառքի ճամբաներ ըլլային՝ այդ տարածութեան մէկ ծայրէն միւսն երեք ամիս կ'ստեւէ քննիչի ոտքով, նոյնչափ և լայնութիւնը. արդէն ձմեռուան չինգ ամիսներն անհնար է ճամբորդել: Պաշտօնեայէ մը այսպէս անհնարինն պահանջելը բան մը չուզել կ'նշանակէ, և արդէն այդ խեղճերն ալ ըստ այնմ կ'ընեն:

ԷՍՏԷԷԷ

Ամէն վիլայէթի մէջ ըստ օրինի պիտի գտնուի երկրագործական Տնօրէն մը, որուն դերը շատ անգամ նոյն իսկ քննիչի դերին հետ կ'շփոթուի: Ասոնք կուսակալանիստ քաղաքներու մէջ ապրող երջանիկ պաշտօնեաներ են, գրէթէ առանց զբաղման:

Հարկ ու անհրաժեշտ է այս պաշտօնները միացնել, ամէն Վիլայէթի մէկ քննիչ կամ անօրէն բաւ է, և արդէն մեր ամէն վիլայէթին մէկ հաս զտնելն անհնար իսկ է առ այժմ:

Ասոնց ստորակարգեալներն են սանձագններու երկրագործական պաշտօնեաներն և գազաններուն երկրագործական ուսուցիչները, որոնք պարսին երկրագործներուն հետ յարաբերութեան մէջ գանուիլ և անոնց ուսուցանել իրենց արհեստը, խրատներ տալ մշակութեան մասին, նոր մէթոտներն և երկրագործական մեքենաներուն գործածութիւնը բացատրել, ևն., սակայն իրականին մէջ ասոնք մեծ գործ մը ըրած չունին գեռ:

Այս տարի Սերասախ գանուած միջոցիս կուսակալն ըսաւ ինձ թէ «Բաղաքին մէջ չորս երկրագործ. պաշտօնեաներ կան, որոնք ո՛ր և է օգտակարութիւն մը չունին, առաւօտէն մինչև երեկոյ իրարու երես կ'նային, ասոնք կ'ստիպեմ գիւղերն երթալ, կ'համակերպին, ու քանի մը օրէն կ'գառնան...», և յետ խորհրդածութեան որոշեցինք որ անոնք կարելորդ գիւղերու մէջ բանախօսութիւններ ընեն, գիւղացւոց հասկցած լեզուով, և ամէնէն աւելի գործնական նիւթերու վրայ, և առ այս կուսակալին առաջարկութեամբ պատ-

րասանցի 20 դասերու ծրագիր մը: Չգիտեմ՝ սակայն թէ ի գործ դրուեցա՞ւ թէ ոչ:

Ըստ մեզ, երկրագործական բոլոր պաշտօնեաներն ալ բանախօսութիւններ ընելու են երկրագործներուն. այս բանախօսութեանց նիւթերը, թիւն ու անդերն որոշուելու են նախարարութեան կողմէ ու գործադրութիւնը պահանջուելու է: Զօր օրինակ, երկրագործական ուսուցիչներն ընելու են ասրեկան 120 դաս՝ նախնիներու կեդրոնները, երկրագործական պաշտօնեաները 60 դաս՝ հաշաներու կեդրոնները, իսկ երկրագործական քննիչները կամ անօրէնները 30ական դաս՝ անձաքներու կեդրոնները: Երկրագործ. ուսուցիչներն ու պաշտօնեաներն իրենց դասերն ընելու են գիշերները, յաջորդ օրերը արուած բանախօսութեան գործնականը ցուցնելու պայմանաւ, իսկ բարձրագոյն պաշտօնեաները տօնավաճառի (Բաշար) օրերը՝ երբ գիւղացիք քաղաք եկած կ'ըլլան, և երեկոյին: Կարելի է և ասոնց բանախօսութեանց ծրագրեր տալ աստ յսակայն յօդուածս քաղաքական թերթի մը յատկացեալ ըլլալուն, կ'ստիպուիմ ետ կենալ մասնագիտական լինդրոց մէջ մտնելէ:

Մեր պաշտօնեայք երբեմն այնպէս մը կ'ցուցնեն թէ լաւ երկրագործութիւնը միայն ի ձեռն կատարելագործեալ սուղ գործիքներու կարելի է ընել. սխալ մ'է այս.

պէտք է ժողովրդեան երկրագործական սկզբունքներն հասկցնել: Գործիքներուն ամենէն կարեւորներն են արօրը, հունտերը մաքրող գործին (tarare) և կամնիչն (bateuse): Առաջին երկուքն ընդհանրապէս աժան են, իսկ վերջիններու գիներն ըստ տեսակին մեծապէս կ'զանազանին. ձիածիգ անիւաւոր կամնիչները (bateuse à manège) 40—50 ոսկի կ'արժեն և բաւաճիչն արագ գործ կ'արտադրեն, կան և ձեռքի կամնիչներ 10—15 ոսկի արժողութեամբ, զորս կ'արժէ ընդհանրացնել ի մեզ. անշուշտ մեծ երկրագործներուն և մեծ ազարակներուն համար նախապատիւ են շոգեշարժ մեքենայով կամնիչները՝ 600—800 ոսկի արժողութեամբ, որոնք և կրնան ծառայել գիւղի մը համայնքին: Վարժ երկրագործ մը գրէթէ մեքենայի չափ կանոնաւորապէս կրնայ ցանել ձեռքով իր արտերը, և ցասքել (herser) ու լոզել իր հողերը տարրական գործիքներով:

Նախարարութեան երկրագործ պաշտօնէից մասին չունիմ ըսելիք, անոնք իրենց ստանձնած ճիւղերուն մէջ բաւական վարժ են, և եթէ Հալքալըի մէջ դաս տալէ դադարելով միայն նախարարութեան մէջի իրենց պաշտօնին նուիրուէին՝ շատ աւելի օգտակար պիտի կրնային ըլլալ. նոյնը կըրնանք ըսել և կենդանաբուժական ճիւղին

համար, որ ըստ մեզ և համայն Եւրոպիոյ (ի բաց առեալ Գերմանիայէն) երկրագործական անօրէնութեան մէկ ճիւղը պարտի ըլլալ, և որով թէ՛ պիտոժէի խնայողութիւն մը կ'ըլլայ և թէ գործն իր բնական ճամբուն մէջ կ'մտնէ: Քաղցր է մեզ յուսալ թէ կենդանաբուժական ճիւղին այժմու Տնօրէնն որ ի Յրանտա կրթութիւն առած է, ինքն ևս կ'զգայ այս թերին, և զայն սրբազրկու համար աջակից կ'ըլլայ նախարարութեան:

Գ. ԿԵՆԴԱՆԱԲՈՒԺՆԵՐ ԵՒ ԿԵՆԴԱՆԱԲՈՒԺԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Կենդանաբուժներու և մանաւանդ վարժ կենդանաբուժներու տեսակէտով շատ ազքատ ենք: Գաւառաց մէջ և նոյն իսկ աստ ասիկա մեծապէս աչքի կ'զարնէ: Գործնական մեծ վարժութիւն չունեցող մեր կենդանաբուժները շատ անգամ հիւանդ կենդանույ մը քով կ'նեղուին, կ'շուարին ու քրտինք կ'թափեն: Կ'ջանան իրենց բոլոր կարգացածն ի մտի բերել, և հիւանդութեան տեսակն որոշել, ու դժբաղդարար շատ քիչ անգամ կ'յաջողին, որով և օգտակար չեն կրնար ըլլալ հասարակութեան: Այս յանցանքն այդ կենդանաբուժներունը չէ, ո՛չ, անոնք աշխատած են պէտք եղածին չափ, և յաջողած են վկայագիր ձեռք բերել, սակայն անոնց արուած չէ

պէս, եղածին չափ գործնական մարզանք,  
և այդ յանցանքը մերն է, վարժարանինն է:

Կենդանաբուժութիւնը մարդոց բժշկու-  
թեան նման է, գիրքերու մէջ չսովորւի,  
այլ հիւանդներու մօտ և հիւանդանոցնե-  
րուն մէջ, ուստի և կենդանաբուժական  
վարժարաններն իրենց կից ունենալու են  
կենդանեաց հիւանդանոց մը: Նախապատիւ  
է և զրացի գանուղի հեծելազօրաց կամ  
թնդանօթակրաց զօրանոցի մը՝ օգտակար  
համար անոնց հիւանդ կենդանիներէն: Կա-  
ւազոյն է որ կենդանաբուժական հաստա-  
տութիւնն ըլլայ քաղաքին կեդրոնը, և  
կամ մի այնպիսի տեղ ուր քաղաքացիք  
տանին իրենց հիւանդ կենդանիները, ա-  
նոնց ցաւերուն մասին վարժարանի ու-  
սուցչաց խորհուրդ հարցնելու համար, ուր-  
կէ և մեծապէս կրնան օգտուիլ վարժա-  
րանի ուսանողները:

Մեր կենդանաբուժական վարժարանն  
այս յատկութեանց գրէթէ և ոչ մին ունի,  
արդարև զօրանոցի զրացի չէ, և այնպիսի  
գրէթէ անձանօթ տեղ մը՝ որ շատ քիչե-  
րուն ծանօթ է, և հեռաւարար բացառարար  
անդ հիւանդ կ'տանին դարմանել տալու հա-  
մար: Արդարև՝ յարակից հիւանդանոց մը ու-  
նի, սակայն ընդհանրապէս պարապ է, զի  
վարժարանի կից եղազգեաց ժանտախտի շի-  
ճազեղիլպատրաստութեան ուսումնարանը<sup>(\*)</sup>

(\*).—Ս.յս հաստատութեան մէջ եղազգ-

երկիւղ կ'ներշնչէ հասարակութեան, իբր  
ժանտախտէ վարակեալ վայր, և արդարև  
ալ բացառարար անդ բերուող եղազգիները  
կ'ենթարկուին այս հիւանդութեան, ուստի  
և եղազգիները չեն բերուիլ անդ: Չիազ-  
գիները քիչ անգամ կ'բերուին, զի անոնց  
մասին ժողովուրդն աւելի հաւատք ունի  
պայտարներու վրայ: Ոչխարազգեաց մա-  
սին մտածելն իսկ աւելորդ է. ասոնց հի-  
ւանդները գրէթէ երբեք տեսնելու առիթ  
չեն ունենար աշակերտները: Աւելցուր այս  
թերութեանց վրայ՝ վարժարանին մէջ Հիւս-  
ուսածարանագան, Ախտաբանական, Կազ-  
մախօսութեան, Բնախօսութեան և Կեն-  
դանաբանական աշխատանոցներու չգոյու-  
թիւնն որով և աշակերտք առանց գործ-  
նական հմտութեան, և գրէթէ առանց հի-  
ւանդ կենդանիներ տեսնելու ու դարմա-  
նելու վարժարանէն կ'ելլեն: Ի՞նչ կ'սպա-  
սէք այսպիսի հաստատութենէ մը:

Եաց ժանտախտի չճաղեղ պատրաստելու  
համար՝ հորթերը ժանտախտի կ'ենթարկեն,  
ու անոնց արիւնը կ'առնեն, մինչև որ ան-  
չնչանան: Այսպէսով պատրաստուած չճա-  
ղեղով կ'դարմանեն զիտամբ ժանտախտի  
ենթարկուած եղները, որով և այս հաս-  
տատութիւնն եղանց ժանտախտի բոյն մը  
կրնայ համարուիլ:

— Զինուորական կենդանաբուժական վարժարանն աւելի բաղդաւոր է զի անոնք ոչ միայն հիւանդանոց մ'ունին, այլ և դրացի են զօրանոցի և թէ անդ այժմ գիտական աշխատանոցներ հաստատուելու վրայ են :

Այս երկու վարժարանաց մէջ ալ դժբաղդաբար չկայ դեռ Որոճացողաց (Եզազգի, Ոչխարագգի), այսինքն՝ բուն երկրագործական կենդանեաց յատուկ արտաբանական դաս մը, ինչպէս Ֆրանսայի և այլ տեղեաց Կենդանաբուժական վարժարանաց մէջ, այլ Ընդհանուր արտախօսական դաս մը կայ որ անբաւ է :

— Զինուորական և քաղաքական Կենդանաբուժական վարժարանները միացնել ուղուեցաւ, և դեռ շատեր զայդ կ'պնդեն, սխալ մ'է սա, զինուորական Կենդանաբուժական վարժարանի ուսանողք հարկ է որ ընեն զինուորական կրթութիւն և ենթարկուին զինուորական «էֆէֆի», ինչ որ աւելորդ է քաղաքային կենդանաբուժներու համար: Ուսմանց ծրագրին մէջ ալ մեծ տարբերութիւն կայ քաղաքային կենդանաբուժք բոլոր ընտանի կենդանեաց ժառին հաստութիւն մ'ունենալու են, մինչդեռ զինուորական կենդանաբուժները միայն Զիւղղեաց հիւանդութիւններն գիտնալու պէտք ունին: Եւ թէ այս միացմամբ միմիայն ուսուցիչներու ամսականին վրայ խնայողու-

թիւն մը կ'ըլլայ, որ աննշան է, և թէ այդ երկու վարժարանները միացնելով իւրաքանչիւր կարգի աշակերտաց թիւն այնչափ շատ (\*) կ'ըլլայ՝ որ դժուար է թէ ուսուցչաց անոնց դասախօսելը, և թէ աշակերտաց օգտուելը, ուստի և այս գաղափարը բոլորովին մէկ կողմ թողլու է :

— Գուցէ ոմանք դիտել տան թէ Ֆրանսայի մէջ զինուորական և քաղաքային կենդանաբուժութեան համար տարբեր վարժարաններ չկան. ամենքն ալ միեւնոյն վարժարանէն կ'ելնեն: Ֆրանսայի՝ Ալֆոբի, Թուլուզի և Լիոնի կենդանաբուժական վարժարաններէն ելլողները քաղաքային կենդանաբուժներ են. ասոնք եթէ ուղեն բանակին ծառայութեան մէջ մանել՝ պարտին մրցման քննութեան ենթարկուելով՝ Սօմիւռի հեծելազօրաց վարժարանը երթալ, ուր տարի մը մարզանքի և ձիաբուժութեան կ'հետեւէին: Դրութիւն մը որ մեղ համար անյարմար է առ այժմ :

— Ոմանք կենդանաբուժներու պէտքը նկատի առնելով առաջարկեցին քանի մը վարժարաններ ևս հաստատել ի դաւառս. այս ալ սխալ մ'է, զի նախ ըստ բաւա-

(\*) — Ըստ ուսուցչական ներկայ տեսութեան, 20—30է աւելի աշակերտ պարունակելու չէ ո և է դասարան :



կանին ուսուցիչ չունինք՝ նոյն իսկ հաս-  
մը ևս հաստատելու համար Անաստուրի  
մէջ . և եթէ կարելի ալ ըլլար , քանի մը  
տարիներ վերջը կառավարութեան պէտք  
ունեցածին չափ կենդանաբուժներ ունենա-  
լէ ետք՝ ինչ պիտի ընենք անկէ ելլող ա-  
շակերանները , անոնց գործ չպիտի կրնանք  
գտնել ու մեր վրայ բեռ պիտի ըլլան :  
Կայսրութեան գանազան կողմերը կեն-  
դանեաց դարմանատուններ հաստատելու  
ժամանակը դեռ չառ հեռու է , 20—30  
աարիէն առաջ այսպիսի բանի մը վրայ  
մտածելու չէ :

—Վերջերս երկու տարուան ծրագրով  
Օժանդակ կենդանաբուժներու վարժարան  
մը բացուեցաւ , ուր կենդանաբուժական  
վարժարանի գրէթէ բոլոր ծրագիրը պիտի  
գասախօսուի , աւելի թեթեւ կերպով :  
Ախալ մ'է այս , զի այդ վարժարանէն ել-  
նողներն ինքզինքնին կենդանաբուժներ պի-  
տի համարին , իմաստակներ պիտի ըլլան ,  
և արդիւքն աւելի մեաս պիտի հասցնէ  
քան օգուտ : Մենք որ կենդանաբուժա-  
կան վարժարանէ ելլողներու գործնականի  
մասին տգիտութիւնը կ'իստատովանէիք քիչ  
մը վերօք՝ ինչ ըսենք ասոնց համար :

—Շատ աւելի նպատակայարմար պիտի  
ըլլար նոյն իսկ կենդանաբուժական վար-  
ժարանին մէջ հոտտատել վեցամսեայ և

առ առաւելն մէկ տարուան շրջանով դաս-  
ընթաց մը , ուր ընդունուին նախակրթա-  
բաններէ ելլող աշակերաններ և ուսանին

Ա . Տարափոխիկ գլխաւոր հիւանդու-  
թիւնները . Եղազդեաց ժանտախա , Տարա-  
փոխիկ թոքատապ , Թոքային ուռականու-  
թիւն , Ածխախտ , Նշանական ածխախտ ,  
Ջերմուտ բերանակեղ , Խինացաւ (Morve) ,  
Մաղիկ խաշանց (Clavellée) , Քոս խա-  
շանց , Կատաղութիւն շանց :

Բ . Այս հիւանդութեանց դէմ պաշտ-  
պանուելու առողջապահական միջոցները :

- Գ . Հպատակեցում կենդանեաց :
- Դ . Հիւանդ կենդանեաց ջերմութիւնը  
չափել և անոնց հիւանդութեան ընթաց-  
քին հետեւիլ :

Ե . Ժանտախտի շիճ ներարկել :  
—Եւ ամէնէն դարմանալին՝ այս վար-  
ժարանէ ելլող իմաստակներուն պիտի  
տրուի 800 դրշ . ամսական , մինչդեռ Կեն-  
դանաբուժական Բարձրագոյն վարժարա-  
նէն ելլողները կ'ընդունին միայն 700 դրշ . :

Պուլկարներն որք քիչ ծախսով և կամ  
առանց ծախսի գործ տեսնելու գաղանիքն  
ունին , այս մասին մէջ ալ իրենց այդ յատ-  
կութիւնն երևան կ'ըբերեն : Երկրորդական  
վարժարաններէ ելլող պատանիներէ ա-  
նոնք որ կենդանաբուժի մը քով ժամա-  
նակ մը ծառայելէ ետք՝ անոնցմէ օգնակա՞ն

կենդանութիւնը վկայագիր կ'ընդունին, կառավարութիւնը զանազան քննութեան ենթարկելէ ետք՝ կ'գործածէ իբր կենդանեաց առողջապահութեան պաշտօնեայ:

Ռուսերն ալ ունին նմանօրինակ առողջապահական պաշտօնեաներ, սակայն ծանօթ չէ ինձ թէ՛ ի՞նչպէս կ'պատրաստեն, և կ'արժէր որ մենք այս կարգի ո՛րևէ ձեռնարկ րնելէ առաջ՝ ուսումնասիրէինք մեր գրացի երկրաց այդ մասին ունեցած հաստատութիւններն և գործունէութիւնը:

— Բառ մ'ալ եզրագլեաց ժանտախտի մասին, որ մեր երկրագործներու օժանդակ այդ կարևոր կենդանեաց փճացումն յառաջ բերած է, մեր գաւառաց գրէթէ ամէն կողմերը: Այդ անագորոյն հիւանդութեան դարման շիճուկը ծանօթ է, ումեք զայն պատրաստելու հաստատութիւն մ'ունինք, որ սակայն անբաւ է ըստ բաւականի շիճազեղ պատրաստելու համար: Անդ միայն քառասուն կենդանիներ կան, մինչդեռ 200 հատեր կարելու են: Նմանօրինակ մէկ կամ երկու հաստատութիւններ բանալու համար, վարկ արուեստ երեսփոխանութեանէ, սակայն կարծեմ դեռ բան մ'եղած չէ, որով երբ հեռագրով շիճազեղ կ'ուզուի՝ մենք զայն մատակարարելու վիճակին մէջ չենք... (\*):

(\*).— Գանուած են դժբախտաբար պաշ-

եւ եթէ նոյն իսկ ըստ բաւականի չիճազեղ պատրաստենք ու հասցնենք՝ անբաւական է այդ առանց առողջապահական այլ զգուշութեանց, առողջապահական շղթայի հաստատութեան, հսկողութեան, վարակեալ կենդանեաց դամբու հականերխման, հիւանդ կենդանեաց յատուկ առանձնարաններու (lazaret) շիւնութեան, և այլ յարակից միջոցներու գործադրութեան: Եւ այս ամէնը գործադրելու համար երկու գլխաւոր բան պէտք են, դրամ և հմտութիւն: Մեզ այդ երկուքն ալ կ'պակսին:

Ե. ՄԵՐ ԵՐԿՐԻ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Մեր երկրի Զիազգիներն ու Եզազգիներն հաւասարապէս վատասերած կրնանք համարիլ, և սա հետեանք է գլխաւորապէս այդ կենդանիները գէշ սնուցանելնուս և իրենց տարողութենէն վեր չարքաշ աշխատանաց ենթարկելնուս:

տօնեաներ, որոնք այս շիճուկի ազդեցութեան վրայ հաւատք չունենալնուն՝ պատրաստ գանուած աւելի քան 10,000 չափը (dose) չեն զրկած ամիսներով, մինչեւ որ լրագիրները բողոքի ձայն չբարձրացուցին, և ուրիշներ որ մինչև իսկ խտտի խաշոյններն իբր շիճուկ աուին ժողովրդեան, և նոյն իսկ դրամով:

Չկազգեաց ազնուացման համար կ'խորհուի Ծրանասայէն և Մածառխտանէն ազնիւ ցեղեր բերել և առ այս նոյն իսկ զնման պաշտօնեաներ զրկուեցան . . . : Սխալ մ'է այս , քանի որ մենք կենդանաբուծութեան արհեստին անսեղեակ ենք , ամէնէն ազնիւ ցեղերն իսկ մեր ձեռքերուն մէջ պիտի աւրուին ու վատասերին : Նախապատիւ է ընտրողականութեամբ ազնուացնել մեր ի բնէ ազնիւ ցեղերը , ըլլա՛յ Բուսելիի կամ Անատօլուի հասարակ ցեղերն , և կամ Խնուսի , Միջագետաց և Սուրիոյ ազնիւ ցեղերը . և եթէ պահանջուի աւելի մարմին ունեցող և ընդոստ գացող յատուկ ցեղեր՝ բաւ է ընտրել ռուսական Օուլօֆն և կամ Ֆրանսական Մեծ Բէռլոսը , որք աւելի յարմար են մեր միջավայրին և պայմաններուն քան նուրբ ու պահանջկոտ ազնուացեալ ցեղերը :

Եզազգեաց համար վատասերումէ զատ կայ և գրէթէ անհետացում . այո՛ , Եզազգեաց ժանտախտը փճացուցած է մեր Եզազգիները գրէթէ ամէնուրեք , մանաւանդ Անատօլուի արևելեան գաւառաց մէջ : Գիւղօրէից ժողովրդեան % 25—75ը լծելու եղչունի , ուստի նախ այդ սոսկալի ախտին առաջքն առնելու է , և ապա միայն մնացեալն ազնուացնելու ջանադիր ըլլալու է : Ասոնց համար ալ բնականաբար ազնիւ ու

նուրբ ցեղերու արևն մացնել ուղելը սխալ մ'է : Կարելի է ազնուացնել մեր բնիկ ցեղերն ընտրողականութեամբ , և կամ մեր զրացի երկիրներէ ցուրեր բերելով , որպէս Պուլկարիայէն՝ Բլէյլեայի ցեղը , Ռուսիայէն՝ Խրիմի կամ Կարսի ցեղերը : Մեր երկրի սուրիական ազնիւ ցեղը շատ նուրբ է , և չէ կարող ապրիլ մեր հիւսիսի միջավայրերուն մէջ : Եթէ անպատճառ կ'ուզուի եւրոպական ցեղի մը արիւնը մտցնել՝ շատ շատ զուիցերիական Շուիցի ցեղը կարելի է փորձել :

Գոմէշներու , ոչխարաց և այծերու համար մեր ունեցածները լաւ են , օտար ցեղերէ երբեք վար չեն մնար :

Կենդանաբուծութեան մէջ ընդունուած ճշմարտութիւն մ'է թէ կենդանի աւելի անընդհատ ու լաւ խնամով կ'ազնուանան՝ քան թէ ազնիւ ցեղերու հետ արիւնխառնութեամբ . . . : Մեր երկրողործներն իրենց կենդանիները շատ անգամ միայն յարգով կ'անուցանեն մանաւանդ ձմեռը : Ի՞նչպէս կարելի է ազնիւ , խոշոր ու ուժեղ կենդանիներ ունենալ այս եղանակաւ :

Թուրքիոյ երկրագօ . կենդանեաց ցեղերն ազնուացնելու համար հաւայ մը բանալու ծրագիր կար՝ աշխարհիս ամէնէն ընտիր ամէն կարգի ցեղերով՝ որ աւելի կենդանաբանական պարտէզ մը պիտի ըլլար : Իս

րեբախտաբար այդ կարգի տարօրինակ ծրագիրն եղած դիտողութեանց շնորհիւ ջուրն ինկաւ, և Սելանիկի մեծագործը ու տարօրինակ հասան վերածուեցաւ վերջապէս մի համեստ խարտեաց և ցուլերու կայանին: Այս ամառ այդ հաստատութիւնն այցելելուս տեսայ թէ՛ անդ գտնուող պաշտօնեաներն ալ համոզուած են թէ հասայի զաղափարն իսկ սխալ մ'է, և մտադրած էին նոյն իսկ անդ գտնուող մի քանի մասակները ձեռքէ հանել, զի այս հաստատութեան կից այդ կենդանեաց պտոյտի փոքր մարդ մ'իսկ չկայ, որով և կենդանիք անդ բանտարկուածի պէս են:

Ուստի միայն խարտեաց և ցուլերու կայաններ պարտինք ունենալ, որոնց կարեւորութիւնն զգացուած է Երկրագործական նախարարութենէն, և որոցմէ մի քանիներ բանալ որոշուած էր Անատոլուի կողմերը, որպէս Սերաստիա, Էնկիւրիւ, ևն.:

Նախապատիւ է որ այս կենդանիները շարունակ այդ կայաններու մէջ չպահուին, այլ շրջան ընեն շրջակայ գիւղերն և անդ հիւր մնան արգասաւորութեան շրջանին (Ապրիլէն Յուլիս) մի քանի օրեր կամ շաբաթ մը՝ տեղւոյն կենդանիներն արգասաւորելու համար, և ապա անցնին դրացի գիւղերն և միշտ ընդ հսկողութեամբ հաս-

տատութեան պաշտօնէից: Այս դրութիւնը նախապատիւ է, զի գիւղացիք գիւրութիւն չեն ունենար իրենց կենդանիները մինչև կայանները տանիլ արգասաւորութեան համար:

Երկրագործական պաշտօնեայք՝ որպէս նաև խարտեաց և ցուլերու կայաններու պաշտօնեայք՝ պարբերական բանախօսութիւններով ժողովրդեան ուսուցանելու են կենդանարուծական սկզբունքները, և անոնց լաւ հասկցնելու թէ՛ կենդանիք մեծեղաներ են, որքա՞ն որ լաւ մնանին՝ այնչա՞ն լաւարբեւնէ՞ կոտան և կ'աշնոտանան, ուսուցանելու է և անոնց՝ կենդանեաց սնունդի պատրաստութիւնն ըստ կենդանեաց տեսակի, տարիքի և պայմաններու պարէնի որակն ու քանակն որոշելու օրէնքները: Առանց այս կարեւոր հմտութեանց բոլոր ջանքերն ու զոհողութիւններն ի դերե կ'ելլեն, ու կենդանիք վերստին կ'վատասերին ու կ'փճանան:

2. ՄԵՐ ԱՆՏԱՌՆԵՐԸ

Մեր անտառներուն հետզհետէ անհետացումն ու աւերումն ամէնուն ծանօթ իրողութիւն մ'է: Քննենք հոս այս ջնջման պատճառները, անոր հետեւանքներն և հուսկ ուրեմն անոր առաջքն առնելու միջոցները:

Իբր օրինակ առնենք Սեբաստիոյ Վիլայէթն որ կէս դար առաջ իբր անտառա-

չատ նշանաւոր էր, ու այսօր այդ անտա-  
նաց շատերու հետքերն հազիւ կ'տեսնուին:  
Բուն իսկ Սերաստիոյ «անճաֆի» նշանաւոր  
Չամլը Պէլի անտառը շատոնց լինցած է,  
Թօղանլուի անտառաց հետքերը կ'աես-  
նուին, անտառով ծածկուած Թէճիբ լեռ-  
ները գունուրեք ցիրուցան ծառեր կ'կրեն,  
մնացած են միայն Չառայի մօտակայ Քէօ-  
սէ Տաղի անտառներն և Ազիլլէյի կողմե-  
րուն Աւչար Տաղի անտառները, որք կը  
մատակարարեն այսօր գրէթէ առանձին  
Սերաստիոյ սանճագը, ուր մինչև 8 օր-  
ուան (եղան սայլի գնացքով) հեռաւորու-  
թեանէ կուգան փայտ տանիլ, և արդէն այս  
հսկայ անտառները փճանալու վրայ են, և  
որոյ հետեւանօք վառելանիւթերը մեծա-  
պէս սղած են: Սերաստիոյ քաղաքին մէջ  
մէկ կառք փայլը մինչև վերջին տարիներս  
15—20—30 զրշ. կ'արժէր, իսկ այս տարի  
ամառը կ'արժէր 80—90—100 զրշ.: Գա-  
լով ամուխին՝ օխան 30 փր. կ'արժէր այս  
ամառ, մինչ նախորդ տարիներ 8—10  
փր. էն աւելի եղած չէր:

Շապին Գարահիսարի սանճագին Ալը-  
ճարա, Ուլագ Գայա (\*), Եւչ Քէօբբիւ ան-

(\*).—Այս անտառին հատումն և ա-  
տաղձի վերածումն խոր. մէզրը 16 1/2 դշ. է  
հաշուով մեծահարուստ վաճառականի  
մը արուած է՝ թէպէս այլք խորանարդ  
մէզրին 38 զրշ. առաջարկած են:

ուանեալ անտառները բնաջինջ եղած են,  
Գրբըզ գիւղախուճքի անտառները լիննալու-  
վրայ են: Գրբըլ Տաղի անտառներուն կէ-  
սը չէ մնացած, միայն Իյաիրի անտառը  
գեռ բաւական կարեւոր է, և ներկայ ըն-  
թացքով այն ալ կ'ջնջուի:

Թոգասի սանճագին էրպայի նշանաւոր  
անտառը քանդուած է այժմ, շատ մը մա-  
սերը վարելահողի վերածուած են ու փճա-  
նալու վրայ են: Նիքսարի մօտակայ Չամ  
էլի անտառները շատ գէշ կերպով կ'մա-  
տակարարուին, ու եթէ անոնց մասին ա-  
ւելի հոգածութիւն ցոյց չտրուի, պիտի  
փճանան: Տամլը Տաղիի և Գրբըլ Փէլիաի  
նշանաւոր անտառներն օր քան զօր կ'կոր-  
անցնեն իրենց կարեւորութիւնը:

Ամասիոյ սանճագին Ազ Տաղի, Թավ-  
չան Տաղի, Գունտուզ Տաղի անտառները  
գրէթէ փճացած են: Վէզիր Քէօբբիւ գա-  
ւառակի Տօմուի անտառները, որք 8 ժամ  
երկայնութիւն և գրէթէ նոյնչափ ալ լայ-  
նութիւն ունին, անխնայ կտրուելու վրայ  
են. անդ ծառայող ճարտարի պաշտօնեայք  
8—10 տարիէն կ'հարստանան:

Սերաստիոյ վիլայէթին զրացի գանուղ  
Սամսնի «անճաֆի» անտառները փճացած  
են, և Վէզիր Քէօբբիւի անտառէն փայտ  
կ'տանին, և իբր հետեւանք այս տարի ա-  
մառը Սամսնի մէջ ամուխի հօխան 20  
փր. կ'արժէր:

—Անտառներն ընդհանրապէս շատ անխնամ ձգուած են . գիւղացիները կ'երթան անդ, ո՛չ միայն իրենց պէտք եղած փայտը կ'ձարեն՝ այլև վաճառման համար կ'կտրեն : Ծառեր գուշ մը կամ թի մը շինելու յարմար առանեակներով ծառեր կ'կտրեն , ու անոնցմէ միայն մէկին՝ մէկ յարմար ժառը կ'տանին , մնացեալը թողլով անդ : Տախասակի պէտք ունեցողներ՝ ուղիղ ծառերն հողէն մէկ մէթը վերօք կ'կտրեն , ու այդ հասեալ ծառի ստորին 2—3 մէթըը կտրելով կ'տանին , միւս մեծ մասը թողլով անդ : Մարդ այս անտառներէն անցած ատեն զերեզմանաաան մէջէն անցնելու զգացումը կ'ունենայ . ծառերը կտրած ու կտրած ամէն կողմ սփռուած են : Ծառ անգամ ապրող ծառերու շափ ալ զեռիներ սփռուածներ կան : Ծառերու հատումն ապօրէն կերպով անդի կ'ունենայ՝ հողին մակերևուոյթէն բաւական բարձր՝ ինչպէս վերն ըսինք , և թէ հատեալ ծառի բունին մակերևուոյթը խոցոտելով խորզուբորթութիւններով կը ձգեն , առանց գոնէ փոքր ինչ յարգարելութնամբ տանելու . այդ վիճակաւ ձգուած ծառերը շատ դժուար կրնան աճիլ ու ապրիլ , ընդհանրապէս կ'փճանան :

Ծառեր հաճոյքի համար կ'հրկիզեն անտառները , մանաւանդ երբ խեժոս ծառեր կ'պարունակեն , և կ'երեւայ թէ այդ

անտարանն հաճոյք կ'սպաճառէ այդ անխիղճներուն : Այս տարի երբեմն անտառներու մէջ՝ վառուած անտառի ժամերու աւուղութեամբ տարածութիւններ տեսայ :

Թուրքիոյ մէջ շարունակական անտառներն հարուստաբաւ են , այսինքն անդ անդ վարելահողերու վերածուած են գիւղացիներու կողմէ , և սա ընդունուած ապօրէնութիւն մ'է . ո՛վ որ անտառի մի մասը վաւելահողի կ'վերածէ՝ ճրիարար անոր կը փրանայ . . . : Այս թոյլատուութիւնը մեծապէս աւերած է մեր երկրին անտառները :

Անտառաց հսկողութիւնն անուանական է , անտառապահներու իւրաքանչիւրին այնչափ մեծ տարածութիւններ յանձնուած են՝ զորս հսկելու համար գոնէ տասն անձ պէտք է . . . ու այդ պաշտօնեաներն այնչափ քիչ վճարուած են՝ որ ստիպեալ կ'ըլլան զեղծարարներու գործիք գտնալ (\*) : Բնդհանրապէս ասոնք իրենց գիւղերը կ'մնան և գունուրեք անտառները կ'այցելեն , իբր պտոյս :

Աւելի բարձրագոյն պաշտօնեայք պարբերաբար կ'այցելեն անտառներն և շատ

(\*) .— Պիլայի անտառներու 30,000 սակուոյ զեղծման աւթիւ 48 պաշտօնեաներ չուրջ 5000 սակի ընդունելով գործիք եղած էին :

Քիչ իշխանութիւն ունին հսկող պաշտօնէից վրայ: Աւելորդ կ'համարիմ աստ խօսիլ Անտառային վարչութեան կազմակերպութեան մասին, որ ուրոյն յօդուածի մը նութ պիտի ըլլայ:

Եթէ իրաց վիճակն այսպէս շարունակուի, մեր բոլոր անտառները պիտի ջնջուին, ու մենք ինչպէս մեր պէտքերուն շատ մը առարկաները՝ նոյնպէս և վտակաւանութիւնը (փայտ ու ածուխ), ու մեր ատենքու շինութեան ատաղձը եւրոպայէն բերելու պիտի ստիպուինք (\*):

— Անտառներու բնաջնջման միակ հետեւանքը վտակաւանութիւնը սղութիւնը չէ, այլ և ինչպէս ուրիշ առթիւ ըսած եմ, այդ անտառներու ջնջմամբ՝ երկրին անձրեւները կ'կորսնցնեն իրենց կանոնաւորութիւնը, և փոխանակ տեղացող անձրեւները ծառերու արմատներու առաջնորդութեամբ ստորերկրեայ աւաղանաց ծնունդ տալով՝ ակերուն միջոցաւ դուրս ելլելու, ու մեր պէտքին ծառայելու, երկրին երեսը մնալով հեղեղներ կ'կազմեն ու աւերներ կ'գործեն ժողովրդեան, նամանաւանդ երկրագործ դասակարգին, և իբր բնական հետեւանք ակերը կ'նուաղին, կ'չորնան,

(\*) — Արդէն սկսուած է շատ տեղեր եւրոպական ատաղձ գործածել:

և սրով բերրի տարածութիւններ անջրդի, ամայի և անբարեբեր վայրերու կ'վերածուին:

Մեր անտառազուրկ երկիրներու երկրագործները փոխան փայտի՝ զոր դժուարաւ ձեռք կ'անցնեն՝ կ'վառեն իրենց բնականի կենդանեաց աղբերը, որք հողին բաժինն են: Հողերնին զրկուելով զիրենք պարարտացնող ամէնէն կարեւոր տարրէն՝ օրէ օր կ'սպառին, կ'տկարանան ու կը կորսնցնեն իրենց բերրիութիւնը: Մերաստիոյ մօտ Ուլաչ դիւղացի երկրագործ մը զիտած էր զայս ու կ'ըսէր ինձ. «Քսան տարիէ աւելի է որ փայտ վառած չունինք, հողերու հալը կ'վառենք, որով և մեր հողերը կ'աղքատանան»: Արդարեւ Մերաստիոյ «անձառն» մասին մեր ըրած քննութեամբ հաստատեցինք թէ՛ 50 տարի առաջ հողերը կ'արտադրէին Վին 10, իսկ այսօր առ առաւելն Վին 5 կուտան, և այս միայն Մերաստիոյ «անձառն» կամ Վիլայէթին յատուկ չէ. ամէն ուրեք միևնոյնը տեղի կ'ունենայ: Ատանայի հովիտը, որ նշանաւոր է իր բերրիութեամբ և միջին հաշուով Վին 20 կ'արտադրէր՝ հողերու աղբուքը լքուած ըլլալուն՝ հունձքերը սկսած են նուաղիլ, և այս տարի քննութեամբ հաստատեցինք թէ՛ քիչ ասքամ հացահատերը Վին 10էն աւելի կու-

տան, և շատ բնական է այս նուազումը, զի հողերն որչափ հարուստ ալ ըլլան՝ կ'յոգնին, կ'սպառին՝ եթէ չաղբուին: Բացառութիւններ են ջրարբի հողերը, զի անոնք զիրենք սղողող ջուրերու միջոցաւ կ'սպարարտանան, անոնց մէջ գտնուած աննզարար տարրներով՝ որք յառաջ եկած են գիւղօրէից ու քաղաքաց աղբերով ու աղանդութիւններով: Ջրարբի հողերն համեմատաբար շատ քիչ են ի մեզ, գոնէ առ այժմ, քանի որ մասնաւոր աշխատութեանց չենք ձեռնարկած, գոնէ այդ տեսակէտով օգտուելու մեր երկրի բազմութիւ գետերէն ու այլազան ջուրերէն:

Ինչ որ ալ ըլլայ՝ հողերու կարևոր ու մեծ պարարտեցուցիչն աղբն է. դայն իբր վառելանիւթ գործածելու հարկին մէջ չգտնուելով՝ զանիկա հողերու յանձնելու համար, հարկ է որ փայտ արտադրող անտառներ ունենանք:

Ընդհանրապէս վառուած աղբի (աթարի) մոխիրն հողին կ'յանձնեն, որ բնականաբար աղբին ուժն ու զօրութիւնն ունենալէ շատ հեռի է, անոր հոգին էլած մարմինը մնայած է, զուրկ է բորակածնէ և այլ կարևոր տարրերէ, միայն հանքային աղեր կ'սպարունակէ, որք ընդհանրապէս քիչ օգտակարութիւն ունին:

Քիմիական պարարտեցուցիչները կրնան

այս պակասին տեղը գոցել, սակայն բնականաբար շատ սուղի կուգան. և ինչ տարօրինակութիւն վառել հողերու ամէնէն կարևոր ու բնական պարարտեցուցիչն աղբն՝ և անոր տեղ շատ սուղ գնով քիմիական ու արհեստական նիւթեր տալ հողին:

— Իբր գարման այս ամէնուն այլ առթիւ առաջարկած եմ.

1. Իսպառ արգիլել անտառ կտրելով գաշտի վերածելու գործը:

2. Անտառներ չրզեհողներն խստիւ պատժել:

3. Ժողովրդեան չթոյլատրել անտառ մանելով փայտ կտրել, այլ ինչպէս տեղի կ'ունենայ եւրոպական երկիրներու մէջ՝ կառավարական պաշտօնեայք ծառերը կտրել ապւով փայտը կոյտերու վերածելու են, որք վաճառականաց խոր. մէթրով կ'ծախուին, իսկ շուրջ բոլոր ժողովրդեան ըստ իրենց պիտոյից՝ այսինքն ընտանեաց անդամոց թուոյն համեմատ վառելափայտ կուտան ձրի:

4. Գիւղացի ժողովրդեան պէտք եղած փայտեայ տարրական գործիքներու (առչտ, գուռ, թի, ևն.) վերածման յատկութիւն ունեցող ծառի կտորներ պատրաստելով՝ կառավարական վարժ պաշտօնեայք գանոնք շատ փոքր գնով մը ծախսելու են գիւղացւոց:



Ասանց վրայ կ'յառելուս մի հինգերորդ .  
անտառները չկարել ժամանակ մը , 5—10  
տարի , ըստ անտառին : Անոց գոնուող կտա-  
րած , կտրած , չորցած ու այրածները կը  
բաւեն այգչափ ժամանակ , որով թէ՛ ան-  
տառները կ'մաքրուին և թէ՛ կ'բուսնին ու  
կ'բարելաւին : Նոյն իսկ մի քանի տարի  
անտառներու եկամուտներէն զրկուի-  
լը մեծ կարուստ մը չէ , երկրի գանձուն  
համար , և շատ լայնօրէն վճարուած կ'ըլ-  
լայ ասկէց յառաջ գալիք օգուտներովը :

Է. ԱՆՏԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Մեր մասնագիտական վարժարաններու  
ամէնէն տարօրինակն անկասկած՝ երկու  
տարիէ ի վեր հաստատուած անտառա-  
բանական վարժարանն է : Մեր այս ըսածն  
սպաղստացանելու համար քննենք վարժա-  
րոնը , ուսուցչական մարմինը , ծրագիրը ,  
և ին . :

Վարժարան .—Այս դպրոցը բացուեցաւ  
նախ Գումգալուի կողմերն և ապա զգա-  
ցուելով անտառի մը մօտակայութեան կու-  
րեւորութիւնը՝ փոխադրուեցաւ Պէյլուք-  
տէրէէն 1<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ հեռաւորութեամբ Պահճէ  
գիւղի զրացի Պէլկրատի անտառաց մօտ՝  
հին չորանոց մը , որոյ ախոռները փոքր  
բարեփոխութեամբ դասարանի ու ննջա-  
արանի վերածուեցան : Այս հաստատու-  
թիւնը զուրկ է հաւաքածոյներէ , աշխա-  
տանոցներէ , մատենագարանէ , գիտական

պիտոյքներէ , և նոյն իսկ դասարաններու  
պատերը մասնագիտական դասաւանդու-  
թեանց օժանդակ պատկերաց նկարներու  
յատուկ տախտակներէ զուրկ են : Այս  
վարժարանի միակ առաւելութիւնը քաղա-  
քէ հեռի գտնուելով՝ ուրիշներէ նամանա-  
ւանդ օտարներէ չտեսնուիին է :

Ուսուցչական մարմին .—Անտառաբանական  
լուրջ վարժարանէ ելլող անձեր չունենալ-  
նուս՝ բնականաբար ուսուցչական լուրջ  
մարմին մը կազմելն անհնարին պիտի ըլ-  
լար մեզ : Անտառաբանական վարժու-  
թեան պաշտօնեաներէ և այլ ինչ ինչ անձերէ  
կազմուած է ուսուցչական մարմին մը ,  
Ուսուցիչք մերթ ընդ մերթ կ'երթան դաս-  
տալ , և շատեր աւելի ճիշդը 30—40 տա-  
րի առաջ անտառաբանական վարժարանի  
մէջ աւանդուած դասերու տեսերը կ'կար-  
գան ուսանողաց , և անոնց զրել ու դոց  
ընել կուտան : Քանի որ այդ տեսարակները  
կան՝ ինչ հարկ մասնագիտական հմտու-  
թեան , որ և է անձ կարող է ընել : Զոր-  
օրինակ կենդանաբանութեան և բուսա-  
բանական բնախօսութեան դասերն՝ որք  
այսպիսի վարժարանի մը մէջ այդ ճիւ-  
ղերը մշակող անտառագետի մը կ'յանձ-  
նուին՝ անտառաց մասին կիրառութիւններն  
ուսուցանելու համար , բժիշկի մը արուած  
են : Վարժարանին անօրէնն ու փոխ անօ-

րէնը միայն մեր վաղեմի Անտառաբանական վարժարանէն ելած են, որոց առաջինը դպրոցի մատակարարական գործերով դրաւ զամ է, և երկրորդը լեզուի դաս տալով իսկ վեց ուսուցիչներէն և ոչ մին վկայեալ է Անտառաբանական վարժարանէ, մին միայն այդ վարժարանին մէջ լեզուի ուսուցիչ եղած է:

Այս ուսուցիչներուն վճարումն անհամեմատ է իրենց աշխատութեանց ժամերուն, ընդհանրապէս խտտապահանջ չեն իրենց անօրէնը միայն 1500 դր. կ'ստանայ, մինչդեռ միեւնոյն նախարարութենէ կախում ունեցող երկրագործական, կենդանաբուժական և արհեստագիտական վարժարանաց անօրէններն 3000ական դրուշ կ'ստանան: Փոյթ չէ սակայն, քանի որ շարժումն 4—5 օրը դպրոցէ դուրս կ'մնայ արդէն:

Մտից անուիւն.—Այս կարգի մասնագիտական վարժարաններ մտնող ուսանողներ շատ լաւ պատրաստուած ըլլալու են, զի հոն միայն գիտութեանց անտառներու յատուկ կիրառութեանց դասերը կը արուին: Փրանսայի Անտառաբանական բարձրագոյն վարժարանը՝ միայն Փարիզի երկր. բարձր. վարժարանէն և զինուորական բազմարուեստեան վարժարանէն ելլողները կ'ընդունուին, և որք շատ զօրա-

ւոր են մաթէմատիքի (գրահաշիւ, երկրաչափութիւն, եռանկիւնաչափութիւն, մեքենագիտութիւն, նկարագրական երկրաչափութիւն, և ին), բուսաբանութեան, քիմիայի և ֆիզիքի մէջ: Մեր այս վարժարանն ընդունուող աշակերտներէ ոմանք մաթէմատիքի, գիտութեանց և նոյն իսկ թուրք լեզուի մասին տգէտ էին...:

Ծրագիր.—Վարժարանը կանոնաւոր ծրագիր չունի դեռ. վերջերս կարծեմ նանսիի Անտառաբանական վարժարանի ծրագիրը բերել տուին՝ հետեւողութեամբ ծրագիր մը պատրաստելու համար, և ինչ հարկ ծրագրի քանի որ կան 30—40 տարի առաջ արուած դասերու տեսրակներն՝ որոց հեղինակն եղած ըլլալ կարծեցնել կուտայ ուսուցիչներէն մին՝ որ այդ վարժարանին արարելէնի ուսուցիչն ըլլալու պատիւն ունենալով՝ այդ տեսրակները ձեռք անցուցած է:

Այս վարժարանին մէջ գերմաներէնի դաս ալ կայ. ինչո՞ւ, զի լսած են թէ՛ Փրանսայի անտառաբանական բարձր. վարժարանին մէջ այդ լեզուն կ'դասախօսեն, և առանց պատճառն հասկնալու նոյնը կ'ընեն: Փրանսայի մէջ անտառաց մեծ մասը Գերմանիոյ սահմանին վրայ կ'գտնուի, և այդ վարժարանէ ելլողներու մեծ մասն անգ անտառապահ սպայի պաշտօնին պիտի կոչ-

ուի, ուստի և կարեւոր է անոնց համաժգերմաներէն գիանալ: Եթէ այդ տեսակէտով մեզ օտար լեզու մը գիանալ հարկ է՝ պէտք է Սլավերէն ունիլ, զի մեր սահմանակից ազգերուն մեծ մասն (Ռուսիա, Պուլկարիա, Սերպիա, Գարաաաղ) սլավերէն կ'խօսին:


Աշակերտներն իբր գործնական աշխատութիւն անցեալ տարի միայն անտառաց մէջ ճամբայ բացած են, իսկ այս տարի կէս հէկտար հող փորած են՝ այն աեղ անտառային անկարան մը պատրաստելու համար: Այս լոկ գործաւորական աշխատութիւններէն զատ այլ գործնական մարզանք չեն ըրած: Աշակերտք Պէլկրատի անտառի ծառերու տեսակները միայն կ'ճանչնան:

Այս տարի ամառը նախարար պէյլին հետ խօսելուս՝ զգացնել տուի այդ վարժարանին մէջ շատ մը դասերու պակասը, յորս յիշատակեցի և Հեղեղներու ընթացքն ուղղելու (Correction des torrents) յատկացեալ դասն՝ որ այնչափ կարեւոր է. խոստացաւ այդ դասն աւելցնել տալ, սակայն ո՞վ պիտի դասախօսէ:

Ուսման արեւոյտ-թիւնը. — Անտառաց անօրէնութիւնը մեծ գործ մը տեսած ըլլալու ժամօք՝ անցեալ տարի այս աշակերտները շրախ հանել ուղեց ութ ամսուան շրջա-

ով մը, բաւ է որ այդ միջոցին օրինակած ու գոց ըրած էին իրենց յանձնուած տեսարակները...: Բարեբախտաբար Պետական Խորհուրդն ընդգիմացաւ, ու այս տարի միայն շրջանաւարտ պիտի ելլեն...: Խեղճ ուսանողներ հակառակ իրենց աշխատասիրութեան՝ եթէ չնորհքով ուսուցիչներ իսկ ունենան՝ պատրաստուած չըլլալուն Յ—Կ տարիէն հազիւ կրնան Անտառագիտութիւնն ուսանիլ... սակայն ումանց համար այդ ամէնն աւելորդ ուսուցներ են, բաւ է որ գոց գիտնան իրենց տեսարակներն և... իրենց ձեռքն համբուրեն:

Դարձած. — Ամօթ է այս տեսակ հաստատութիւնները բարձրագոյն վարժարան անուանել, եթէ չուզուի զայն փակել՝ դոնէ վերածելու է Անտառաբանական գործնական վարժարանի, ուսկից ելլեն անտառաց նսկողներ և անտառաց մասին քիչ շատ հմտութիւն ունեցող պաշտօնեաներ, որպէս Ծրանսայի՝ Պատի գործնական վարժարանը. իսկ Բարձրագոյն վարժարան բանալու համար սպասելու է վերագարծին Եւրոպիոյ Անտառաբանական վարժարանները զրկուած ուսանողաց: Անոնք միայն կրնան այդպիսի վարժարան մը հիմնել ու անդ արդիւնաւորապէս դասախօսել:



Ը. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Մեր անտառաց վարչութիւնը շատ տարօրինակ կերպով կազմուած է, և որ կարծես աւելի մեր անտառաց վնասելութնոյն ունի՝ քան թէ անոնց նպաստելու: Բնապետական շրջանին մէջ կարելի էր այս կարգի խնդրոց մասին զխտողութիւններ ընել, որով և այդ երկար շրջանին աւերեցան մեր բոլոր անտառները: Կյուսացուէր սակայն որ գոնէ այս սահմանադրական շրջանին այս ամէնը բարելաւէր, բայց դժբաղդարար իրաց տխուր վիճակը կ'շարունակուի, և կարծես երթալով կ'վատթարանայ:

Ինչ կ'սպասուի վարչութենէ մը որուն գլուխն այս գիտութեան մասին մասնագիտական ուսումէ գրեթէ զուրկ անօրէն մը կ'գանուի: Այդ անձն երբեմն արարելէնի ուսուցիչ Անտառաբանական վաղեմի վարժարանին մէջ՝ ազա Սէլիմ Մէլհամէի օրով Սէլանիկի կուսակալութեան Անտառաց քննիչ գանուած է, և կ'պարծենայ այդ շրջանին իր նսկողութեան տակ գրանուած անտառաց մէջ ի գործ դրած վարչական կազմակերպութեամբ. սակայն ստոր երկրին շահուց որչափ վնասակար ըլլալը՝ Երեւմտից նախարարութեան քննչութեան կողմանէ մասնաւոր անդեկազրով յայտ-

նուած է: Անտառաց անօրէնն առանց դաւաճները շրջելու, անտառները տեսնելու, և այդ տեղերու պաշտօնէութեան խորհուրդներ հարցնելու՝ վարչական կազմակերպութիւն մ'ըբաւ, որ բնականաբար մէկէ աւելի թերութիւններ ունի:

Գաւառաց պաշտօնէութիւնը կ'ըստուի չորս կարգի, Տնօրէն, Քննիչ, Գիտական պաշտօնեայ և Անտառապահ: Անտառապահները պարտին գիտնալ կարգալ, գրել, բնակելու են անտառաց մէջ և ի նարկին ճամբայ բանալու ու աշխատելու են, և կ'ընդունին ամսական 150-300 դրշ.: Մեր երկրին մէջ կարգալ, գրել գիտցող անձ մը՝ եթէ անօթի իսկ մնայ՝ չհաճիր տիւ և գիշեր անտառին մէջ անցընել, միշտ վտանգի ենթարկուիլ, այդչափ փոքր փոխարինութեամբ մը: Դրացի գիւղացիներէն ոմանք այդ պաշտօնը կ'ստանձնեն, սակայն իրենց գիւղերը կ'մնան և զուն ուրեք կ'այցելին անտառներն... օդ առնելու համար:

Գիտական պաշտօնեաներն անտառաբանական վարժարանէ ելած ըլլալու են, և կ'ընդունին միայն 500-600 դրշ. և հակելու են գաղալի մը անտառներուն, զոր երբեմն 5 պաշտօնեայ հաղիւ կրնայ կատարել:

Քննիչներն ահագին սանձագի մը անտառաց վերին նսկողութիւնն ունին վրա-

նին , որ արգարե կարելի է ի գործ դնել , պայմանաւ որ շարունակ չըջին . և ինչպէս կարելի է զայն ի գործ դնել , քանի որ 1,300էն 2,000 զըջ . միայն ամսական կ'ընդունին , և տեղափոխութեան անբաւ ծախս մը , առածնին իրենց ճամբու ծախսին չբաւեր եթէ խղճահար կերպով կասարեն իրենց պաշտօնը :

Մէն մի կուսակալութեան անտաններու վերին պաշտօնեան անտառաց Տնօրէն մ'է . նա գիտական գործով չզբաղիր , այլ հաշուական և յարաբերական գործերով :

Այս կազմակերպութեան հետեւանօք Անտառաց գիտական պաշտօնեաներն ու քննիչներն սկսան երկրագործական վարչութեան մէջ անցնիլ . զի հոս շատ աւելի կ'վճարուին , 750-1,200-2,000-2500 և շատ աւելի նուազ ձանձրոյթի ենթակայ են : Նախարարութիւնը տեսնելով որ այս ձայնորդ կարգադրութեան հետեւանօք անտաններն իրենց պաշտօնէութենէն պիտի զրկուին՝ արգիլեց այս պաշտօնափոխութիւնը :

Նոր կազմակերպութեան չենթարկուած վիլայէթներու պաշտօնեաները միշտ կ'փոխադրուին կազմակերպութեան ենթարկուած տեղերը , որով և անտառաց մի մասն առանց պաշտօնէի կ'մնայ :

Այս կազմակերպութիւնն հարկ է սրբա-

գրել , աւելցնել անտառապահներու թիւն ու ամսականներն , և խստապահանջ ըլլալ անոնց մասին : Աւելցնել գիտական պաշտօնեաներու թիւն ու անոնց վճարքը : Քրննիչներու ամսականն աւելցնել և պարտաւորել զանոնք շարունակ չըջիլ՝ վճարելով անշուշտ տեղափոխութեան ծախսն ըստ իրենց աստիճանին : Գալով անտառաց կուսակալութեանց տնօրէններուն՝ քանի որ անոնք գիտական գործով չեն զբաղիր՝ աւելորդ է որ Անտառաբանական վարժարանէ ելլողներ ըլլան , նախապատիւ է որ այդ պաշտօնները վարչական մարդոց յանձնուին՝ որով թէ՛ ինայոյզութիւն կ'ըլլայ , և թէ՛ այդ պաշտօնին կոչուած անտառագէտներն՝ այլուր իբր քննիչ կրնան գործածուիլ , որոնց այնչափ պէտքը կ'զգացուի : Գուցէ նախապատիւ է ջնջել այս տնօրէնութիւններն և իւրաքանչիւր քննիչի օժանդակ տալ մի յարաբերական պաշտօնեայ որ այդ տեսչութեան հաշիւներն ու գրութիւններն հաղորդէ նախարարութեան . գործ՝ որ 1,000 զըջ հոց պաշտօնեայ մը կրնայ կատարել , և այլ տեսակէտով աւելի օգտակար ալ է : Վերջապէս , իբր ամէնէն կարեօր՝ հարկ է որոշել՝ ունէ մի պաշտօնէի ղեկծուին հաստատուելուն՝ զայն վտարել և այլևս խոպտո չգործածել :

Յ. ՄԵՐ ՀԱՆՔԵՐՆ ՈՒ ՀԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒՅԻՒՆԸ

Մեր երկիրն հանքերով շատ հարուստ է, ունի նամանաւանդ երկաթ, պղինձ, կապար, արծաթ, քրոմ, ֆոսֆատ, անթիմուան, պօռփաքս, գեանածուխ, ևն., սակայն հազորդակցութեանց դժուարութեան համար՝ այդ մետաղներն ու նիւթերն եւրոպայէն կ'ըներենք ընդհանրապէս, զի ոչ միայն դժուարին է այդ հանքերն իրենց նախնական վիճակին մէջ փոխադրել՝ այլ և այդ հանքերու փոխադրեալ կեղորոններու մէջ դժուար է գտնել վառելանիւթեր դայնս ջերմութեամբ զտելու համար:

Մեծ քաղաքներն իրարու կցող խեղճուկ ճամբաները նկատի առնելով՝ կրնաք երեւակայել գիւղօրէից միջև ու լեռներու մէջ գտնուած ճամբաներն, որք աւելի ճամբու հեռքեր են, շատ տեղեր աննշմարելի, ուր ո'չ թէ կառք՝ այլ և ձին ու էշը չեն կարող ընթանալ. հարկ է գիտնել ջորիներուն, որոց լայն սմբակները միայն կարելի կ'ընեն իրենց թիկանց վրայ կրելու բեռներն այս կարգի անանցանելի տեղերը: Երբեմն այսպէս ճանապարհորդութեամբ մը կ'հասցընեն վերջապէս հանքերը՝ ծովեզրերն, և կամ մեր ունեցած մի քանի փոքր երկաթուղիներու գիծերն, ուրկից կ'ըրկեն եւրոպա, ուր գտուելով մեզ կ'դարձնեն: Եւ կամ հանքերը կ'փոխադրեն մօտակայ անասուններու մէջ հաստատուած տարրական

գործարաններն, ուր շուրջ բոլորի ծառերու ամուխի վերածմամբ ջնջուելէն ետք՝ այդ ամուխները կ'փոխադրեն այլ ծառաշատ կեղորոններ, մինչև որ այն տեղուց ծառերն ալ իրենց կարգին սպառին:

Այս դժուարութեանց հետեւանօք շատ քիչ անգամ կ'օգտուինք մեր երկրին խորերը գտնուող հանքերէն, և իրաց այս վիճակը պիտի շարունակուի մինչև որ հազորդակցութեանց միջոցները չգիւրանան երկաթուղեաց հաստատութեամբ, և առ այս հանքերու հարցը միշտ կապուած է ու պիտի մնայ երկաթուղեաց հարցին հետ:

Ասիէց երկու տարի առաջ հանքային վարչութեան կողմանէ մեզ հազորդուած ցուցակէ մը կ'տեղեկանանք թէ Թուրքիոյ մէջ կ'շահագործուին 189 հանքեր, որոց

- 79ը Օսմանցիներու կողմանէ,
- 5ը Անանուռն ընկերութեանց կողմանէ
- 29ը Օսմանցեաց և այլ օտար հպատակաց կողմանէ ընկերովի,
- 67ը Եւրոպացեաց կողմանէ,
- 4ը Պայմանաժամով արուած է օսմանցեաց և օտարաց ընկերութեանց
- 5ը կառավարութեան կողմանէ կ'շահագործուին:

Դիւրին է հաստատել թէ օսմ. անանուռն ընկերութիւն և կամ օսմանցիներու ու օտարաց ընկերովի բաւածներն ընդհանրապէս եւրոպական ընկերութիւններ են, որով և ի մի բան կրնանք ըսել թէ

89 հանքերու 100ն օտարաց և 89ն օսմանցիներու ձեռքն են :


Մեր հանքերու ամէնէն հարուսաներն և կամ ծովեզերքի ժող ըլլալով շահաւորներն օտարաց ձեռքը կ'գանուին : Եղածն եղած է , գոնէ յետ այսորիկ աշխատինք աւելի նպաստաւոր ըլլալ մեր երկրին և օսմանցիներուն : Առ այս պէտք ունինք հանքային գործերու հմտութիւն ունեցող պաշտօնէից և հանքային կանոնաւոր վարչութեան , յորոց զուրկ ենք . . . : Հանքային վարչութիւնը միայն երեք հանքային ճարտարագէտ ունի և մի քանի հաս ալ ործէն քիչ շատ հասկցող պաշտօնեաներ : Հանքային բոլոր գործերը կ'ատենան անտառային վարչութեան զանազան պաշտօնեաները , առանց հանքային որ և է հմտութեան :

Բանուած հանքերու արտադրութիւնը ճշդելու մասնագէտ պաշտօնեայ չունենալով այդ հանքերը բանեցնող ընկերութեանց ճարտարագէտներու տեղեկագրին վրայ կ'գանձուին տուրքերը , որ կրնան ճիշդ չըլլալ , գոնէ երբեմն : Հանքային վարչութիւնը շատ գէշ կազմակերպուած է , և գծրախտարար զեղծմանց վայր մը եղած է , և այս շատ բնական է , երբ վարչութեան գլուխը գանուող անձն որ և է հմտութիւն ունեցած չէ հանքերու մասին :

Երկար տարիներէ ի վեր հանքերու Տնօրէնութիւնը կ'վարէր անձ մը որ այդ գի-

տութեան մասին ո և է հմտութիւն չունէր : անիկա երկար տարիներ հանքային վարչութեան գլուանապահն (archiviste) եղած էր , ու ապա հանքաց անօրէնին վախճանմամբ անոր յաջորդեց : Իր օրով հանքային վարչութիւնը տակն ու վրայ եղաւ : Մեր գիտողութեանց ի պատասխանի բուռեցաւ թէ «Այդ անօրէնն երկար տարիներէ ի վեր կ'վարէ այդ գործը , վարժուած է , չենք կրնար գինքն անպաշտօն թողուլ , և թէ չունինք գիտուն յաջորդ մը :» Վերջապէս այդ անձը գործէ քաշուեցաւ ու մեռաւ , և աճա փոխանակ անոր տեղը հմուտ հանքարան մը անուանելու , այդ պաշտօնն յանձնուեցաւ . . . : հաշուակալի մը : Այո՛ , կառավարութեան արամագրութեան տակ զանուող հանքարաններուն թիւը մեծ չէ , սակայն անոնց մէջ նոյն իսկ կան Բարիդի հանքարանական վարժարանէն վկայեալ շրջանաւարտ ըննիչներ , որք շատ արժանաւոր կերպով պիտի կրնային վարել այդ պաշտօնը :

Կ'ըսուի թէ կառավարութիւնն օտարահպատակ հանքային ճարտարագէտներ կը փնտոէ հանքային վարչութեան մէջ գործածելու համար . անոնք մեղի շատ սուղի պիտի նստին և երկրին լեզուին անտեղեակ ըլլալով քիչ ծառայութիւն պիտի մատուցանեն : Մեր յոյսը դնելու ենք մեր երկրացիներէն հասած հանքագէտներուն վրայ :



Ժ. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ, ԿԵՆԴԱՆԱՐՈՒԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՏԱՌԱՑ ՈՒ ՀԱՆՔԵՐՈՒ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ ՅԵՒՐՈՊԱ

Ընդհանուր առմամբ զրկուելիք ուսանողները լաւ պատրաստուած ըլլալու են : Ասկէց 30 և աւելի տարիներ առաջ մեծ խնամքով կ'ընտրուէին Եւրոպա զրկուելիք ուսանողները , և լեզուի ու ընդհանուր հմտութեամբ զարգացեալները միայն կ'ընտրուէին առ այս , և որք բնականաբար իբրեց հետեւած վարժարանաց մէջ փայլուն գիրք մը կ'ըսնէին : Այս հոգածութիւնը զժբազդաբար նուազեցաւ հեռզհեռէ և այնպիսիներ կ'զրկուէին այժմ՝ որ շատ անգամ ոչ միայն ընդհանուր հմտութեամբ՝ այլ և գացած երկրի լեզուին ևս անտեղեակ են . հետեւաբար այդ խեղճերն հակառակ իրենց բարի կամեցողութեան և ճիգերուն՝ դժուարաւ կ'հետեւին իրենց դասերուն և բնականաբար արդիւնքը միջակ կ'ըլլայ : Ուսանողներու գիւրութեան և մեր երկրին օգտին համար պէտք է նկատի առնել հետեւեալ երեք պայմանները .

Առաջին պայման . — Ուսանողները լաւ գիտնալու են իրենց երթալիք երկրին լեւուն . այդպէս պատրաստուածներէն ընելու է ընտրութիւնը . փորձով գիտենք թէ ամէն ասէն որ ուսանող մը զրկուած է առանց այս պայմանը լեցուցած ըլլալու ,

գէշ արդիւնք տուած է . աշակերտը մէկ երկու տարի աշխատած է նախ լեզուն սորվելու , և ապա տեսնելով որ իրենց ուսանողութեան յատկացեալ ժամանակը լրանալու վրայ է՝ աշխատած են փոխան վարժարանի մը ամբողջ շրջանն աւարտելու՝ միմիայն մէկ գիտութիւն սորվելով դառնալ : Այսպէս տեղի ունեցած է ասկէց 25-27 տարի առաջ երկրագործութիւն սորվելու համար Գերմանիա զրկուած ուսանողներու համար , որոց մին Քիւրիպիտուլիւն , միւսը Կաթնաբանութիւն , երրորդ մը Անասնաբուծութիւն և ուրիշներ հոգերու Ուրտուին (drainage) կամ Վիճակագրութիւն սորվելով դարձան , և ոչ մին ամբողջ երկրագործութիւն ուսաւ , զանուէցան և այնպիսիներ որոնք դառնալէ ետք՝ ֆրանսերէն գործերու միջոցաւ ուսան երկրագործութեան ինչ ինչ ճիւղերը . . . : Ասիկա մեզի խրատ չեղաւ , ու այս տարի կրկին ուսանողներ զրկեցինք Գերմանիա , որոնք անտեղեակ են այս լեզուին . . . :

Բ. պայման . — Ուսանողները պէտք է պատրաստուած ըլլան իրենց մտնելիք վարժարանին համար , և առ այդ պահանջուած մուտքի քննութեան կամ մրցումին ենթարկուին , և ոչ թէ Օտմ. կառավարութեան կամ դեսպանին յանձնարարագրով վարժարան ընդունուին իրր աշակերտ , և



կազն ի կազն հետեւին ապա, ու իբր հե-  
տեւանք ստիպուին կրկնել առաջին տա-  
րին, և ապա փոխան փեփշի, սոսկ սեբեփ-  
ֆէտայով մը գտնան: Այս մասին աւելորդ  
կ'համարիմ օրինակներ տալ, որոնց բազմա-  
թիւ ըլլալը շատեր գիտեն:

Կռնյոճնի, Մոնբէլիէի և Ռուանի երկրա-  
գործական վարժարանաց համար բաւ է  
աւարտած ըլլալ երկրորդական վարժա-  
րանի (Լիսէ) շրջան: Երկր. գործ. վարժա-  
րանաց համար նուազ հմտութիւն պէտք է.  
սակայն Փարիզի երկր. բարձր. վարժարանի  
համար՝ երկրորդական վարժարանի մը շրջ-  
անն աւարտելէ ետք՝ հարկ է հոս կամ  
ի Ֆրանսա տարի մը պատրաստուիլ, ըստ  
մտից քննութեանց պահանջին, յաջողու-  
թեամբ մտից մրցման քննութիւնն անցը-  
նելու համար: Շատ աշխատասէրներն և  
մաթէմատիքի մեծ յարմարութիւն ունե-  
ցողները միայն կրնան յաջողիլ:

Երկրորդական ուսման վկայագիր ունե-  
ցողները կրնան յաջողիլ մանկ գերմանա-  
կան երկր. վարժարանները:

Ֆրանսայի Անտառարանական վար-  
ժարանը շատ խտտապահանջ է մուտքի  
համար: Փարիզի երկր. բարձր. վարժարա-  
նէն և կամ Բազմարուեստեան վարժարա-  
նէն ելլողները միայն մրցմամբ կրնան  
մանկ: Օտարականաց համար աւելի

թոյլատու են, — սակայն աշակերաններն  
դասերուն հետեւելու համար գոնէ Բարի-  
զի երկրագործական բարձր. վարժարանի  
մտից քննութիւնն անցընելու կարող ըլլա-  
լու են: Ֆրանսայի անտառարանական Պատի  
գործնական վարժարանին հետեւելու համար  
մեծ հմտութիւն պէտք չէ: Կենդանարու-  
ժութեան վարժարանները մանկու համար՝  
ի Ֆրանսա և ի Գերմանիա բաւ է ունենալ  
երկրորդական վարժարանի հմտութիւն:  
Հանքային վարժարաններու համար աւելի  
հմտութիւն պէտք է. կարևոր է զօրա-  
ւոր ըլլալ մաթէմատիքի և քիմիաբանու-  
թեան մէջ:

Գ. պայման. — Պէտք է որ ուսանողները  
կանոնաւոր աշակերտ ըլլան և վարժարա-  
նին բոլոր դասերուն հետեւին, և ոչ թէ  
ազատ ունկնդիր ըլլան, և կամ այս կամ  
այն ճիւղին հետեւին միայն: Եւրոպացի-  
ները՝ ժանաւանդ Ֆրանսացիք՝ շատ խիստ  
հսկողութիւն մը ի գործ կ'դնեն իրենց բուն  
աշակերտաց վրայ, հսկողութիւն մը որ  
իրենց ծնողքները չեն կրնար ընել, իսկ  
ազատ ունկնդիրներու և ինչ ինչ ճիւղերու  
հետեւողաց մասին անտարբեր են:

Օսմ. կառավարութեան կողմէ՛ զրկուած  
ուսանողներու մէկ մասն զգալով որ չպիտի  
կրնան մտից քննութիւնն անցընել և վար-  
ժարանի խիստ ուժեղութիւնն իրենց կողմից,  
իբր ազատ ունկնդիր կամ ո և է ճիւղի մը աշա-  
կերտ արձանագրուած են: Ասիկա սխալ  
մ'է, և պէտք է կառավարութիւնն ասոնց

առջևն առնէ, զի երբեք կանոնաւոր աշակերտի մը չափ բան չեն կրնար սորվիլ այս մասնագիտութեան պատրաստուողները: Օրինակաւ մը բացատրեմ: Բարիզի երկր. Բարձր. վարժարանին համար լաւ պատրաստուած ուսանող մը՝ երկու տարիէն վարժարանին բոլոր ճիւղերն հաւասարապէս ուսանելով՝ հարգարաբէր երկրաբանի արտոլ սով կ'եղլէ վարժարանէն, և եթէ ուղէ ս ե է ճիւղի մը համար մասնագէտ դառնալ, բաւ է այդ ճիւղին աշխատանքին մէջ մէկ տարի աշխատիլ. իսկ եթէ պատրաստուած չէ՝ նոյնչափ ժամանակէն (երեք տարի) այդ մասնագիտութիւնն հաղիւ այնչափ կ'սորվի:

Այս հարցը փակելու համար պէտք է բսեմ թէ մեր մէջ ըսգունուած սովորութեան համեմատ ուսանողաց հետ պաշտօնեայ մը զրկելու պէտքն ինձ համար զգալի չէ: Բաւ է զրկուելիք ուսանողաց յանձնարարագիր մը տալ իրենց երթալիք քաղաքին գեսպանին կամ օսմ. հիւպատոսին, որք սիրով պիտի կատարեն իրենց յանձնուած պաշտօնը, և պիտի տանին անձամբ և կամ զրկեն իրենց ներկայացուցչին միջոցաւ այդ ուսանողներն իրենց հետուելիք վարժարանը, և ասով բաւական կարեւոր ծախքի մը առջեւը կ'առնուի:



## ԵՐԿՐԱԳՈՐԾԱՅ ԳԼԽԱԻՈՐ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ

Մեր երկրագործ դասակարգն ունի շատ մը գանգաւաներ, որոնց գլխաւորները կը համարուին հողային զբիւնները, կենդանեաց քողովիները, ասանորդի (եռեւ-ը) քան յան ուրիշ աներաս-իները, ոչխարագէտց որբի (աղնամ) սղովները, հարսդակցութեանց միջոցներու դժուարութիւնները, և խաւացց մէկ մասին մէջ արեղական բռնաորներու աղօրէն պահանջները:

Քննենք մեր հէք երկրագործ հայրենակիցներուն գանգաւաներն ու կրած զրկանքները:

### Ա. ՀՈՂԱՅԻՆ ՅԱՓԵՏԱԿՈՒՅԻՒՆ

Անատոլուի, Հայաստանի և Քիւրախտանի մէջ չկայ գաւառակ մը, գիւղախումբ մը և գուցէ նոյն իսկ գիւղ մը ուր հողային զրկանաց ու յափշտակութեանց մասին գանգաւաներ չգտնուին: Հողային յափշտակութիւններն այլազան ձեւերով ու պատրուակաց տակ տեղի կ'ունենան, սակայն ամենուրեք սկզբունքը նոյնն է: Գիւղին կամ

դրացի գիւղօրէից կամ ագարակաց զօրաւոր անձնաւորութիւնները՝ որք էչրո՞ք, յէյ, յաւ կամ շքրա՞ծի անունը կ'կրեն, կ'խլեն հոն գանուող խեղճերուն ու անզօրներուն հողերը, կամ անոնց մէկ մասն ու է պատրուակաւ: Եղած դրկանքները չորս դասակարգի կրնանք բաժնել.

1. Կառավարութեան, երկրագործական դրամատան և կամ մասնաւորաց պարտուց փոխարէն չնչին դնով զօրաւորաց ծախուած հողեր: Բնականաբար պարտականին ինչքը կ'ծախուի երբ չի վճարեր, սակայն անշուշտ պէտք եղած դիւրութիւնները տալէ ետք և աճուրդով. սակայն դժբախտաբար շատ անգամ այս ձեւակերպութիւնները գրէթէ տեղի չեն ունենար՝ երբ պատուական արտ մ'է խեղճ երկրագործին ձեռքինը: Եւ ո՞վ կ'յանդգնի տեղւոյն աղային դէմ փէճ դարնել, աւելցնել, որով և այդ պատուական հողերը կ'անցնին մեծամեծներուն ձեռքն և շատ չնչին գիւներով:

Աւելորդ կ'համարիմ այս իրողութիւնն հաստատող օրինակներ թուել հոս, զի ասոնք ամէնուն ծանօթ և ամենօրեայ դէպքեր են: Չեմ կարող սակայն չչիշտակել այս դասակարգին վերաբերող օրինակ մը՝ որ ինծի խոր ցաւ ու դարմանք ազդած է: Անցեալ տարի Սեբաստիոյ Ղանդալ գաղա՝ յի կեդրոնին մօտ ցոյց տուին ինծի Սեբաստիոյ 30 քիլէ ցորեն հունտ առնող ըն-

գարձակատարած հող մը՝ այրի կնոջ մը յատուկ՝ որ երեք ոսկի տուրքի փոխարէն վաճառուած է: Բնականաբար երկրին մէկ զօրաւոր անձնաւորութիւնը տէր գարձած է այդ բախտին, և այդ հէք կինն այսօր աւուր հացի կարօտ վիճակի մէջ կ'գտնուի:

2. Ի փոխարէն փոքր վճարքներու ճնշման տակ ֆերուով կամ առանց ֆերուի տեղի ունեցած արժէքաւոր հողերու և ագարակներու գրաւումներ: Կարծուածէն աւելի բազմաթիւ են այսպիսի գրաւումներ: Ահաւասիկ տիպար օրինակ մը՝ որ Սեբաստիոյ սանձագէն Մանճըլըզի գիւղախումբին կ'վերաբերի և ծանօթ է շատերուն:

Մանճըլըզի Գուշ Գայասը գիւղը բնակող Գարաբաբախ Հիւսէյին աղա (Համիրիլէի զօրաց հաղարապետ) 1895ին յուզմանց առեն կ'տրէ Գարամանուկեաններու Չանլը վիրան անուն ագարակին, որ ունէր 1830 արտավար վարելահող, 350 սալ խոտ տուող մարգեր և շատ մը անմշակ հողեր, մէջը կային 21 տուներ, 146 մեծ կենդանի (գոմէշ, եղ, կով, ձի, էշ) և 1850 ոչխար, ընդ ամէնը շուրջ 5000 ոսկի արժողութեամբ, և սպա 1905ին Գարամանուկեան ընտանեաց 55 անդամոց երեքը բռնի Գանկալ տանելով՝ ֆերուի ներկայութեամբ կ'ստիպեն այդ խեղճերը ֆե-

բազմի թագրի տալ . այդ երեք խեղճերն և պաշտօնեայք կ'մերժեն , սակայն Հիւսէյիս աղա սուրբ քաշելով կ'սպաննայ և կ'յաջողի իր ապօրէն գրաւումին 13,000 ղշ .ով օրինականի ձեւ տալ :

3. Բռնի գրաւեալ հողեր և Բերաներ , որոնց Բաժնեակները գեռ իրենց բուն տէրերուն ձեռքը կ'գանուին , անոնց անուան արձանագրուած են , և անոնք կ'վճարեն տուրքը , սակայն բռնաւորք կ'մշակեն այդ հողերն և կամ անդ կ'ղրկեն արածել իրենց կենդանիները : Ասոնց թիւն անհուն է , ամէն գիւղացի գոնէ քանի մը հատ այսպիսիներու պատմութիւնը կ'ընէ : Ես անցեալ տարի այսպիսի շատ պատմութիւններ լսեցի ճամբորդութեանս առթիւ , նամանաւանդ Սեբաստիոյ Մանճըլըզ , Եարասար մեծ գիւղերուն և Թօնուսի գաւառակին մէջ : Այժմ բռնաւորք սկսած են այսպէս յափշտակուած հողերու կեղծ Բաժնեակներ հանել :

4. Մինչեւ ցարդ առանց պետական արձանագրութեան և Բաժնեակի , երկրագործներու կողմէ մշակուած հողեր՝ որոնց բռնաւորք տիրած են , և այժմ իշտներ կ'հանեն իրենց անուան :

Հարկ անհրաժեշտ է կառավարութեան կողմէ դարման տանիլ այս հողային զրկանաց ինքիրներուն , և ո՛չ միայն ար-

գելուլ անոնց շարունակումը , այլ և երբ հնար է՝ կարելի եղածին չափ գոհացում տալ հէգ երկրագործ դասակարգին , որ շատ բան կ'սպասէ , արդար իրաւամբ , սանձանագրական ռէժիմէն , և դառնապէս կ'յայտարարէ թէ գեռ սկսած չէ վայելել անոր բարիքները :

— Առաջին դասակարգին մէջ գանուող զրկանքներն՝ ուր անիրաւութիւնն օրինականութեան և իրաւունքի տարազ հագած է , արդարեւ գեռ դժուար է դարմանել , ուստի և գոնէ եղածն եղած համարելով , հրամաններ տալու է քաղաքական իշխանութեանց և արդարութեան պաշտօնէից , որ այդ կարգի ապօրինութիւններ չկրկնուին :

Իբր օրէնք հրատարակելու է որ երբեք չորձ իջ որչա՛ք պարտ ունենայ , իր ընդանեաց ապրուստին բաւելու շտի հողէն աւելի կ'ծախուի միայն , ինչպէս Եւրոպիոյ մէջ տեղի կ'ունենայ :

Երկրորդ դասակարգը միմիայն կանոնաւոր դատարաններով կարելի է լուծել , պայմանաւ որ առ այդ մասնաւոր հրահանգներ տրուին Արդարութեան նախարարութեան կողմէ :

Երրորդ և Չորրորդ դասակարգի զրկանաց հեղինակ բռնաւորք լինու զօրութեամբ կ'պաշտպանեն իրենց գրաւած հողերը , և խեղճ երկրագործներուն դատա-

բանի ճամբան կ'ցուցնեն: Այդ խեղճերն եթէ կարողանան իսկ շարաթներ և ամիսներ դատարանաց շուրջը դեգերելով՝ իրենց իրաւունքն հաստատել, ինչ որ արդէն ինքնին գժուար է, շատ շատ 25 դշ. ի տուգանքի մը կրնան դատապարտել տալ յափշտակողը, որ ընդհանրապէս այդ փոքր գումարը վճարելէ ետք, վերստին կ'մշակէ ինդրոյ առարկայ հողը, և կամ իր կենդանիները կ'յղէ այդ մարգագետնի (մէրա) մէջ, և նոյն իսկ եթէ տէրը զայն վարելաճողի վերածած է՝ ու հունձք կ'կրէ, և բուն տիրոջ կ'սպառնայ անձամբ պատժել զայն, եթէ վերսկսի իր յանդգնութեանը: Որչափ ատեն որ էշքներն ու զօրաւորները սանձարձակ թողուին և անոնց ազդեցութիւնը չկտարուի, ու կանոնական տուգանքն այնչափ փոքր (25 դրշ.) մնայ, պիտի շարունակուին այս անիրաւութիւնները: Ուստի հարկ է որ հողի յափշտակիչներու և կեղծ խփոսներ ձեռք բերողներու խիստ պատիժներ սահմանուին:

Պէտք է այս զրկեալներն իրենց իրաւանց տէր կացուցանել: Սովորական դատարաններով՝ ինդրանաց լուծումը շատ երկար կ'տևէ, շատ ծախսի կ'կարօտի խեղճ երկրագործներուն կողմէ, և կրնայ գոհացուցիչ արդիւնք չտալ:

Մենք քննութեամբ հաստատեցինք թէ

երկրագործ ժողովրդեան բռնի գրաւեալ կալուածոց աւագ մեծամասնութեան Բախներն իրենց բուն տէրերուն ձեռքն են, և արձանագրութիւնք իրենց անուան վրայ են. ուստի այս մասին վերջնութեք տարւոյ (1909) Օգոստոս 27 և 31ի հրամանագրերը, որ կ'արամագրեն որոշեալ որ կ'բռնուի նոյն մը Բախներ և կամ որոշ անուան որ որոշեալ է, անոր կ'վերաբերի այդ հողը, եթէ յարգուի (և առ ոչինչ համարուի յաջորդ տարուան Ապրիլ 1 թուականաւ՝ ներքին գործոց նախարարութեան խորհրդականին եպարքոսական հրամանաւ կուսակալութեանց ուղղած հեռագրական հրահանգը, որ նախորդին այժը կ'կտարէ և գրէթէ կ'ունչնայնէ), հողերուն և Զբոսներուն աւագ մեծամասնութիւնն իրենց տէրերուն կէսին կ'անցնի: Իսկ օրինական ձև առած հողային անիրաւութեանց լուծման համար հարկ է, ինչպէս քանիցս սրուուեցաւ, շրջանառութեանը զրկել ի գաւառս, մարդասէր ու անաչառ անձերէ բազկացեալ:

Այս չորս առաջին դատակարգութեան վրայ հարկ է նաև աւելցնել գաղթող Հայերու յափշտակեալ հողերու ինդիրը: Բացատրեմ: Բռնակալութեան շրջանին և նամանաւանդ վերջին տարիներուն շատ մը Հայ գիւղացիներ չկրնալով առկա իրենց գէմ տեղի ունեցած հալածանաց ու զրկու-

նայ, գաղթած են բնաանեօք երկրին աւելի հանգիստ կողմերը և կամ օտար աշխարհ, նոյն իսկ երբեմն չվերադառնալու խոստումով, որոնց լքած հողերն այլոց տրուած, բաժնուած կամ ծախուած են: Յետ Սահմանադրութեան հռչակման, այդ տարադրեալ Հայերը դարձած են բնագաւառները, սակայն չեն կրցած ախրանալ իրենց հողին ու շատ անգամ ալ բնակարաններուն: Այսպէս յառաջ եկած է կրնձոտտ խնդիր մը, որ Պետական Խորհրդոյ սեղանին վրայ կ'գտնուի:

Պէտք է կառավարութիւնը պաշտպանէ այս վերադարձող Հայերը, քանի որ բոլորովին օտար գաղթականներու մասին հոգածու կ'գտնուի, և անոնք տէր դառնան իրենց հողերուն ու բնակարանաց: Կառավարութիւնն հարկ է զոհողութիւն մը ընէ ժամանակ մը անոնց կալուածները վախելոյներուն, որպէս մտադիր է ընել: Երջուն դատարանները կրնան և ի հարկին այս պարագային վերաբերող ինչ ինչ կրնձոտտութիւնները լուծել:

Բ. ԿԵՆԴԱՆԵԱՅ ԳՈՂՈՒԹԻՒՆ

Կենդանեաց գողութիւնը շատ ընդհանրացած է ի Թուրքիա՝ չկայ գաւառակ մը որ այս մասին բանգատ չունենայ: Գողութիւնը տեղի կ'ունենայ ձիու, եղի և կամ ոչխարի ա. սին: Երբ գողութիւնն զգացուելով գիւ-

ղախմբին հարկին դիմուի, սա ընդհանրապէս ոսակիան կ'հանէ, որ գիւղախմբին զանազան կողմերը դեգերելէ ետք, ձեռնուենայն կ'դառնայ: Ժողովուրդն ընդհանրապէս իրենց հարկները կ'մեղադրեն գողերը գտնելու մասին պէտք եղած վուրթկոտութիւնն և խոստութիւնը չգործադրուելուն համար: Անցեալ տարի երբ Պիւնեանիի գաւառակին Ագ—Գըչլայի միւսիւրին կ'ըսէի թէ իր գիւղախումբին մէջ տեղի ունեցած շատ մը կենդանեաց գողութեան երեւան հանելուն համար պէտք է խիստ միջոցներ գործադրէ, ինձ պատասխանեց. «Մենք ալ կ'վախնանք այդ անպիտան գողերէն, կրնան մեր ետեւէն իյնալ և չարիքներ գործել»: Այս պատասխանը շատ պերճախօս է, և կրնայ մեծապէս լուսաբանել զմեզ:

Կառավարութիւնն ասոր առաջին անելու համար, կենդանեաց վաճառման ատեն իր գիւղի միւսիւրին և Ծերունեաց ժողովին ստորագրութեամբ վաճառելի կենդանիին տէրն ըլլալը ցուցնող վկայագիր պահանջել օրէնք դրաւ, սակայն ասիկա մեծ աղբեցութիւն չըրաւ, զի մերթմենօր գիտակցաբար կ'առնէ, եղբ կամ ոչխարը չուտով միսի կ'վերածէ և ձին հեռուները կ'տանի: Եւ արդէն գաւառացիք թէ միւսիւրին վկայագիր առնել

չատ դիւրին բան է: Ժողովուրդը չբաւարանալով այս օրէնքի ազդեցութենէն, երեսօի. Ժողովոյ գումարուծէն ի վեր գրեթէ կ'սեղագնէ անդ, և առ այս ազգու օրէնք մը կ'սահանջէ: Զմիւռնիայէն ինձ գրող երկրագործ մը կենդանեաց գողերն իբրև սճրագործ դատապարտել խորհուրդ կուտայ: Այս մասին օրէնքն արդէն պատրաստուած և քննութեան վրայ է: Իցիւ թէ այդ օրէնքով այս ցաւին առաջքն աւնուէր:

Գ. ԱՇԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԱՌՅԻՒ ԱՆԻՐԱԻՌԻՅԻՆՔ

Աշարի տուրքն թէպէտ ծանր, ներկայիս սահանջմանց անհամապատասխան, և ժողովրդեան աւ կառավարութեան շահուց աննպաստ, սակայն մինչև որ հողերուն չափումի և քարտէսի պատրաստութիւնը տեղի ունենայ, ստիպեալ պիտի կրենք զայն, և այդ մասին ժողովուրդն արդէն անոր վարժուած ըլլալով՝ մեծ գանդատ մը չունի, սակայն բնականաբար կ'գանդատի այդ տուրքին կցուած յաւելուածներուն համար: Զոր օրինակ, կրթական և զինուորականաց զգեստուց յատուկ տուրքերն՝ որ կ'յուսած թէ՛ շնորհիւ Սահմանադրութեան վերջ կ'գանեն, որպէս նաև երկրագործական գրամատան ի նորատուած տուրքերնին որ ըստ օրինի վերջացած ըլլալու էր՝ քանի որ այդ գրամատան գրամագլուխն արդէն տասն միլիոնն

անցած է, և կ'սահանջէ որ իր արդեամբ կազմուած այդ պանքայի գրամագլուխէն  $4\frac{1}{2}$  միլիոն սկիի անտոկոս գումարն՝ վերջապէս հատուցանէ Ելեմտից նախարարութիւնը:

Ասոնք ամենափոքր զժգոհութիւններ են, բաղդատմամբ աշուի գանձման եղանակին՝ որուն նկատմամբ ունի լուրջ բողոք: Տասնորդի տուրքն ընդհանրապէս կ'ծախուի ֆլեյշի՛ ըսուած անձերուն. ասոնք կամ իրենց ներկայացուցիչները կալին աւանները կուգան զիւր, և անդ կը մնան մինչև ցվերջ կալին: Ըստ օրինի բերքին  $\frac{1}{8}$  ն առնելէ ետք չափ գրիւով աշուի, էէֆէ և կէֆէօէ անուամբ երեք չափ աւելի կ'առնեն, գոնէ Սեբաստիոյ դաւառին մէջ: Կան ալ որ իրենց համար մեծկակ գրիւ մը պատրաստել կուտան այդ յաւելուածական տուրքն անով առնելու համար:

Հացահատիկներու աշարին համար զեղծումները սահմանափակ են, զի ֆլեյշի՛ն աշին առնելու ստիպեալ է. սակայն խտի, պողատու ծառերու, այգիի, և բանջարեղինաց բերքերու համար բերքի  $\frac{5}{8}$  ի փոխարժէքն առնել սովորոյթ եղած ըլլալուն համար՝ այդ բերքերու տարօրինակ գիներ կ'սահմանեն միւլթէղիմները, այնպէս որ չատեր կ'զղջան այգի, պարտէզ և մարգ

ունենալուն : Փափաքելի է որ «քատասթրոն» վաղ ընդփոյթ աւարտի՝ որպէս զի հողի (արագի) և բերքի (էօշիւր) տուրքերը միանան, և գանձումն ըստ հողերու տարածութեան ու անոնց բերրութեան աստիճանին տեղի ունենայ, առանց նկատի առնելու անոնց մշակումն ու բերքը . որով և ամէն երկրագործ գիտնայ թէ՛ ինչ որոչ տարեկան տուրք պարտի վճարել կառավարութեան . ինչպէս որ տեղի կ'ունենայ համայն Եւրոպիոյ մէջ : Մեղմէ անջատեալ երէկուան Պուլկարիան իսկ ընդունած է այս դրութիւնը :

Դ. ԱՂՆԱՄԻ ՏՈՒՐՔԻ ԱՆՀԱՄԵՄԱՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
ԵՒ ՍՂՈՒԹԻՒՆ

Տուրք մը ու է բերքի արժէքին համեմատական ըլլալու է . աղնամի մասին այդ օրէնքն յարգուած չէ . արգարև Սեբաստիան, ուր մսին օխան առ առաւելն 3 ղրշ . կ'արժէ, գրէթէ նոյնչափ կ'վճարէ, որչափ 4 . Պոլիսը, ուր միսին օխան մինչև 13 ղրշ . կ'վաճառուի : Անօրինակ սուղ տուրք մ'է սա . արգարև մեր ներքին գաւառներուն մէջ, ուր չորս տարեկան ոչխարն հաղիւ 40 ղրշ . կ'արժէ, այդ չորս տարիներուն մէջ կառավարութեան իբր տուրք վճարած կ'ըլլայ չուրջ 20 ղրշ . , այսինքն իր արժէքին 50 %օր, որ իրապէս անօրինակ է և անարդար :

Իբր նետեւանք խելացի մարդիկ հետզհետէ ոչխարաբուծութիւնէ կ'քաշուին՝

հակառակ երկրին առ այս մեծ յարմարութիւն ունենալուն : Իսկ ընդհակառակն ազդեցիկ ու զօրաւոր անձեր այս մասնաճիւղը կ'մշակեն, զի կրնան իրենց ունեցած երամին մէկ մասը պահել, և շատ անգամ ունեցածնուն քառորդը միայն կ'ներկայացնեն հարկահաւաք պաշտօնէին : Պէտք է որ այս տուրքն ամենուրեք մսի արժէքին համեմատական ըլլայ և զգուշանալ որ այդ համեմատութիւնն 10 %օր չանցնի : Նախապատիւ է որ այս տուրքը գանձուի կենդանեաց սպանդանոց յանձնուած ատեն, և կամ վաճառմամբ երկրին սահմանէն դուրս ելնելուն :

Ե. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆՅ ՄԻՋՈՑՆԵՐՈՒ  
ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առանց հաղորդակցութեանց միջոցներու դիւրութեան՝ լաւագոյն տարիներու բերքն արժէք չունենաբ, և երկրագործին ձեռքը դրամ չանցնիր, իսկ գէշ տարիներուն՝ երկրին մէջ սղութիւն և սով տեղի կ'ունենայ, ինչ որ կ'պատահի պարբերաբար մեր երկրին մէջ, ինչպէս մէկ քանի տարի առաջ : Իրարու հետ հաղորդակցութեան դիւրութիւն ունեցող երկիրներու մէջ ո'ւ է առարկայից արժէքը շատ քիչ կ'տարբերի : Ճրանսան ու Ամերիկայի Միացեալ Նահանգներն իրարմէ շատ հեռի են, սակայն շնորհիւ արագընթաց չօգեհաւերու, այնպէս սերտիւ կապուած



են որ, ո՛ր է առարկայ գրէթէ նոյն զինն ունին նիւ—Նորքի և Բարիդի հրապարակներու վրայ :

Վիեննան Լոնստոնէն շատ հեռի է, սակայն երկաթուղիով ու ծովով այնպէս լաւ կապուած են որ այդ երկու հրապարակի վրայ բերքերը գրէթէ նոյն արժէքն ունին : Սակայն մեր երկրի շատ մտաւոր կեդրոններու մէջ իսկ ապրանքներու գիններն յանհունս կ'փոխուին : Քարիւղի սնտուկը Սամսոնի մէջ 20 դշ. արժամ ատեն՝ Խարբերդի մէջ անոր գինը 90 դշ. էր : Այդ հեռաւորութիւնն մինչդեռ ջորին 15 օրէն կ'երթայ, երկաթուղին 10 ժամէն կրնայ կարել :

Անցեալ տարի աշունին Սերաստիայէն Ատանա երթալու հաստատեցի թէ՛ ցորենին գինը Չուքուր Օվայի մէջ Սերաստիոյ կրկինն էր : Երկաթուղի չգտնուած տեղն հունձքերն արժէք չունին : Սերաստիոյ Սանճազն հարուստ է պղնձի, արծաթի, կապարի, անթիմուանի հանքերով, որք չեն շահագործուիր, զի արդիւնքը տեղափոխութեան ծախքը չի կրնար վճարել : Սերաստիոյ մօտակայ Գարտաշլարի բարձունքին վրայ և արևմտեան կողմը կեսարիոյ մօտակայ կէմէրէկ գիւղաքաղաքին մօտ գեանածուխ կայ, սակայն նոյն իսկ քաղքենի երկաթագործները չեն կըրնար անոնցմէ օգտուիլ՝ հաղորդակցութեան

միջոցներու գծուարութեան պատճառաւ : Չէյթունի լեռանց պատուական երկաթն և Ֆէքէի գուտառակի երկաթի, կապարի ու պղնձի հանքերը գրէթէ արդիւնք չեն տար, և Եւրոպայէն բերուած այդ ապրանքներուն հետ չեն կրնար գինով մրցիլ :

Երկրագործութեան և հանքագործութեան առաջին օժանդակներն հաղորդակցութեան միջոցներն երկաթուղիները, կանոնաւոր խճուղիներն և դետային ու ծովային նաւազնացութիւններն են : Ժողովուրդը զգացած է ասոնց կարեւորութիւնն և զայն կ'պահանջէ Սահմանադրական կառավարութեանէն :

2. ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱԳԱՐԱԿԱՅ ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՌ ԱՅԴ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԳԱՆՊԱՏՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆ

Բռնապետական շրջանին մէջ Սուլթան Համիտ իր Ժողովներուն յատկացուցած անսահման պիւտժէն կարենալ փակելու համար՝ կայսրութեան ամէն կողմերուն, նամանաւանդ բերրի հողերով նշանաւոր կեդրոններու մէջ, կայսերական ագարակներ հնարած էր. հողերուն մի մասն շատ ջնջին գներով աւնուած, և մի մասն ալ պարզօրէն անփոխարէն իւրացուցած էր : Անցեալ աշունին այս ագարակներէ մին տեսայ Ազիզիյէի և Կիւրիւնի միջև՝ աւելի

այս վերջնոյն մօտ, (Օսման Տէտէ չիֆլի-  
կին), ու լսեցի անոր կազմութեան սրտ-  
մտթիւնը: Արժէքաւոր ազարակներ ու  
հողեր գրէթէ ջնջին գինով առնուած,  
այդ հողերու տէրերն՝ երբեմն հարուստ ու  
մեծատուն՝ այսօր խեղճ ու աղքատ վիճա-  
կի մէջ էին: Զրկեալք մեծ յոյս ունին  
սահմանադրական «էփփի» արգարութեան  
և կ'սպասեն որ իրենցմէ խլուած ազա-  
րակներն ու դաշտերն իրենց վերագոր-  
ցուին, նոյնիսկ հատուցմամբ իբր փոխա-  
րինութիւն իրենց վճարած փոքր և ան-  
համեմատ գուժարներուն:

Այս կայսերական ազարակաց մէջ այն-  
պիսի ընդարձակատարածներ կան ուր հա-  
րիւրաւոր գիւղեր կ'գտնուին, որոց բնակիչք  
իբր կ'սպասէ կամ ճարտար կ'աշխատին լաւա-  
գոյն է որ կառավարութիւնն այդ հողերն  
անդ ապրող ընտանեաց բաժնէ՝ իւրա-  
քանչիւրի կազմող անդամոց թուոյն համե-  
մատութեամբ, ձրի և կամ ասրեկան փոքր  
հատուցմամբ՝ այնպէս որ 10—20 տարիէն  
անոնք այդ հողերուն տէր դառնան:

Կառավարութիւնն այս ազարակաց հո-  
ղերն իրենց վաղեմի տէրերուն դարձնելով,  
կամ անոնց մէջ աշխատողներուն բաժնե-  
լով, և միայն անոնցմէ օրինական աշար և  
աղնամի տուրքն առնելով՝ շատ աւելի  
կ'շահի, քան ինքն շահագործելով, և կամ

զանոնք շահագործիչ ընկերութեանց  
յանձնելով:

Մենք երբէք համակարծիք չենք այդ  
ազարակներն օտար ընկերութեանց վար-  
ձով տալու գաղափարին, գուցէ զանոնք  
մեր ժողովրդեան բաժնելով աւելի կ'օգ-  
տուի կառավարութիւնն քան օտարաց  
յանձնելով, սակայն ամէն պարագայի մէջ՝  
երկրին շահն կ'պահանջէ որ իր ժողովուր-  
դին բաժնուի՝ որոց իրաւունքն է:

Է. ԽԱՖԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱՐԱՊԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔ

Թուրքիոյ Ասիոյ արեւելեան գաւա-  
ռաց ոմանց մէջ որպէս Պիթլիզի, Տիար-  
պէքիլի և Մուսուլի մի քանի գաւառաց  
մէջ քիւրտ պէյեր ու աղաներ իրենց ազ-  
դեցութեան շրջանին մէջ գտնուող քրիս-  
տոնեայ ժողովուրդէն առն գլուխ՝ Խաֆի-  
րու-թեան անուան տակ տուրք մը կ'առնէին  
(արմաիք, ոչխար կամ դրամ): Սահմանա-  
դրութեան հոչակմամբ շատ տեղեր այս  
տուրքն արդէն բոլորովին վերցած է, սա-  
կայն կ'լսենք թէ ինչ ինչ կեդրոններու մէջ  
դեռ կ'շարունակուի տարբեր ձեւի տակ  
այսինքն այդ աղաներն հողային վարկի  
(արալի էճարէ վերկիտ) անուամբ կ'գանձեն  
եթէ իրական է ցաւալի է. և առ այս կառա-  
վարութեան ուղադրութիւնը կ'հրաւիրենք:

Տարապարտի աշխատութիւնն եւս սահ-  
մանադրութեան հոշակմամբ թէպէտ վերջ  
գտած է, սակայն կ'ըսուի թէ՛ ինչ ինչ  
մութ անկիւններ աղաներ ու պէյեր իրենց  
չուրջ բոլորի ժողովրդեան տարապարտի  
աշխատութիւններ կատարել կուտան, առ  
այս եւս կառավարութեան ուշն կ'հրաւի-  
րենք:

22

8569-8575

<< Ազգային գրադարան



NL0081570

<< Ազգային գրադարան



NL0081569

<< Ազգային գրադարան



NL0081568

<< Ազգային գրադարան



NL0081572

<< Ազգային գրադարան



NL0081567

<< Ազգային գրադարան



NL0081571

<< Ազգային գրադարան



NL0081566



2013

